



Գիտություն

ԱՊՐԻԼ

4

(245)

2012 թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 19-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, նախարարներ, պատգամավորներ: Նշենք, որ ժողովը մեկնարկեց նախօրյակին՝ ԳԱԱ գիտական բաժանմունքներում, որտեղ տեղի ունեցան շահագրգիռ քննարկումներ: Բաժանմունքների ժողովներում լավեցին ուշագրավ և հետաքրքիր գիտական զեկուցումներ: Ի դեպ, զեկուցողների թվում էին նաև ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամները:

Բացելով ընդհանուր ժողովը ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը խնդրեց մեկ րոպե լռությամբ հարգել հաշվետու տարում վախճանված ակադեմիկոսներ Թինա Ասաթիանի, Հրաչ Բարթիկյանի, Սիմոն Կրկյաշարյանի, Ռաֆայել Յովհաննիսյանի հիշատակը:

Այնուհետև Հայ Առաքելական եկեղեցու Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանը ժողովին ներկայացրեց Վեհափառ հայրապետի օրհնությունն ու մաղթանքները:

ՀՀ ԳԱԱ Նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը հանդես եկավ հաշվետու զեկուցումով և ամփոփեց ՀՀ ԳԱԱ 2011 թ. գիտական գործունեության արդյունքները (հաշվետու զեկուցումը, մասնակի կրճատումներով, կարդացեք թերթի այս համարում): Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակազմակերպական գործունեության արդյունքները ներկայացրեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Հրանտ Մաթևոսյանը:



Ձեկուցումներից հետո ծավալվեց մտքերի աշխույժ և շահագրգիռ փոխանակություն: Ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Սահակյանը, երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ Գևորգ Վարդանյանը, էկոլոգամոնոֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Արմեն Սաղաթեյանը, բուսաբանության ինստիտուտի տնօրեն Ժիրայր Վարդանյանը, Գյումրիի երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրեն Սևադա Յովհաննիսյանը:

Այս տարի մեծ շուքով նշվելու է նշանավոր արևելագետ, հայագետ, պատմաբան, հնագետ, մեծահոգև հայ գիտնական Յովսեփ Օրբելու ծննդյան 125 տարին: Եվ, երևի թե, այդ միջոցառումների սկիզբը

պետք է համարել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի աշխարհահռչակ գիտնականի կյանքին նվիրված փայլուն զեկուցումը:

Ժողովի մասնակիցները հավանության արժանացրին ԳԱԱ նախագահության գործունեությունը: Ժողովի ավարտին, ինչպես նշեց նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը, ներկաներին սպասում էր հաճելի արարողություն. անցյալ տարի Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ ընտրված հայագետ Գի Գիտնականներին հանդիսավորությամբ հանձնվեցին դիպլոմներ:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ հաշվետու զեկուցումը

ՀՀ ԳԱԱ հարգելի անդամներ, մեծարգո հյուրեր:

2011թվականը գիտությունների ազգային ակադեմիայի վերջին 20 տարիների գիտակազմակերպական աշխատանքներով թերևս ամենածանրաբեռնված տարին էր: Առաջնահերթ անհրաժեշտ է նշել, որ 2011 թվին հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի անմիջական աջակցությամբ, առաջին անգամ ակադեմիայի 70-ամյա պատմության ընթացքում, Ազգային ժողովը ընդունեց Օրենք ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին: Օրենքով հստակեցվեց ԳԱԱ կարգավիճակը, որպես պետական լիազորված մարմնի, իրավունք ընձեռեց նրան համակարգելու գիտական կազմակերպությունների գործունեությունը, որը կապահովի նաև նրա բնականոն զարգացումը: Օրենքի ընդունումից հետո մշակվեց և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացվեց ակադեմիայի նոր կանոնադրությունը: Այն ապահովում է ակադեմիական կյանքի դեմոկրատացում, ակադեմիայի վարչական մասի կազմավորման գործընթացին (ընտրություններին) ինստիտուտների գիտաշխատողների մասնակցություն, հնարավորություն է տալիս նրանց զբաղվել ձեռնարկատիրական լայնածավալ գործունեությամբ, առևտրայնացնել գիտական արդյունքների կիրառական մասը: Ըստ օրենքի և նոր կանոնադրության պահանջների՝ մշակվել են համապատասխան ենթաօրենսդրական ակտեր: Ակադեմիայի պատմության մեջ առաջին անգամ ձևավորվել է էթիկայի համեմատողով, որը կհստակեցնի համակարգի աշխատողների պարտականություններն ու իրավունքները:

Իր պատմության ողջ ընթացքում, այդ թվում նաև 2011 թվականին, ՀՀ ԳԱԱ-ն ստանձնել է երկրում հիմնարար գիտական ուսումնասիրությունները համակարգողի գլխավոր դերը և իրականացրել հիմնարար ու կիրառական գիտական հետազոտություններ: Հայ գիտնականներն արձանագրել են տպավորիչ արդյունքներ, հիմնել են ճանաչման և բարձր գնահատականների արժանացած գիտական դպրոցներ, (այդ մասին ավելի մանրամասն կասվի ստորև): 2011թ. գիտական ստորաբաժան

ումններում պահպանվել է հիմնարար հետազոտությունների գիտական բարձր մակարդակը: Այդ են վկայում արտասահմանյան հեղինակավոր գիտական ամսագրերում հրատարակված աշխատանքները՝ 866 գիտական հոդված և 13 մենագրություն, ինչպես նաև 84 միջազգային ծրագրերով կատարված աշխատանքները: Մեր համակարգի ստորաբաժանումների գիտական ձեռքբերումների մասին տեղեկատվությունը հիշատակված է Ձեզ բաժանված ամփոփ հաշվետվության մեջ, ուստի թույլ տվեք դրանք չմանրամասնել: Կոչում միայն հիմնարար և կիրառական մի քանի կարևոր արդյունք:

ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտում լուծվել է զուգահեռ x-փնջերով կենտրոնական սիմետրիկ ուռուցիկ տիրույթների տոմոգրաֆիկ նկարագրության խնդիրը:

Մեխանիկայի ինստիտուտում դիտարկվել են սֆերիկ թաղանթի տատանումները ներքին պտույտների հաշվառմամբ և ուսումնասիրվել է ներքին պտույտների ազդեցությունը սահբի և ծոման տատանումների վրա:

ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում կատարվել են ուսումնասիրություններ նոր կայուն ծածկագրական համակարգերի ստեղծման ուղղությամբ:

Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում հեռահաղորդակցության համակարգում կիրառվող 1,5 միկրոմետր ալիքի երկարությամբ լազերային աղբյուրների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով օգտագործվել է էրբիումի և ցերիումի իոններով համահարստացած իտտրիում-ալյումինիային նոմաքարի լազերային բյուրեղը:

Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում տարբեր հարթակների վրա ստացված GaAs թաղանթները օգտագործվել են որպես ալիքալարային համակարգեր մինչև 1000 GHz հաճախականությունների տիրույթում: Նշված համակարգերի հիման վրա մշակվել, հետազոտվել և փորձարկվել են կենսաբանական նպատակների համար օգտագործվող սենսորներ:

ՀՀ ԳԱԱ Հր. Բունիսթյանի անվ. կենսաքիմիայի ինս-

տիտուտում կատարվել է գալարմին դեղապրեպարատի պինդ ֆազային սինթեզ, ինչը թույլ կտա կազմակերպել Հայաստանում գալարմինի և նրա ածանցյալների սինթեզի ներդրումը բժշկության մեջ: Գալարմինը կարող է նշանակվել քիմիաթերապիայից կամ ճառագայթումից առաջացած արյան չարորակ նորագոյացությունների, ինչպես նաև սպիտակարյունության բուժման ժամանակ:

ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնում ապացուցվել է, որ կոբալտ պորֆիրինների նիտրո- և նիտրոզիլային կոմպլեքսների հետ թթվածնի փոխազդեցության ռեակցիայի ընթացքում որպես միջանկյալ միացություն է հանդիսանում N-կոորդինացված պերօքսինիտրատը: Ստացված արդյունքը թույլ է տալիս խորությամբ հասկանալ ազոտի օքսիդի մասնակցությամբ ընթացող պրոցեսները կենսաբանական համակարգերում:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը ԱՄՆ-ի և Եվրոպայի գիտական լաբորատորիաներում իրականացված սպեկտրոսկոպիկ հետազոտությունների հիման վրա անվերապահորեն հաստատել է Արենի 1 քարայրի պղնձեքարի դարաշրջանի շերտում գինու արտադրության ներկայումս հայտնի հնագույն համալիրի գոյությունը, ինչը վկայում է, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջանները խաղողագործության և գինեգործության ելակետային օջախներ են եղել:

ՀՀ ԳԱԱ սոցիոլոգիայի, փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում ուսումնասիրվել են գիտության փիլիսոփայության և մեթոդաբանության խնդրակարգի մեջ ձևական — տրամաբանական վերլուծության կիրառելիության և էվրիստիկական հնարավորությունների հիմնահարցերը:

Կիրառական արդյունքներ

- ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում հետազոտվել և մշակվել է պլազմայի և այն սնող բարձր հաճախականության զեներատորի իմպլանտների համաձայնեցնող ավտոմատ ղեկավար- ➤ 2

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ հաշվետու զեկուցումը

➤ 1 վող համակարգ, որն ապահովում է պազմայի կա-
յունությունը գեներատորի ելքային հզորության
լայն դիսամիկ տիրույթում փոփոխման ժամանակ: Համա-
կարգը կարող է լայնորեն կիրառվել միկրոէլեկտրոնա-
յին տեխնոլոգիաներում:

- ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբ-
լեմների ինստիտուտի կողմից ակադեմիական գիտա-
հետազոտական համակարգչային ցանցը համալրվել է
մի շարք նոր ծառայություններով: Ցանցի հիման վրա
մշակվել և իրականացվել է միջազգային ստանդարտնե-
րին համապատասխանող ազգային ինքնավար գրիդ
ինֆրակառուցվածքը, որը ներառվել է միջազգային և տա-
րածաշրջանային համանման ինֆրակառուցվածքնե-
րում:

- ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ում արտա-
սահմանյան տարբեր ընկերությունների պատվերով ու-
սումնասիրվել և հաստատվել են ոչ սպիտակուցային ա-
մինաթթուների արտադրության տեխնոլոգիական չափա-
նիշները, արտադրական նմուշների ստացումը և սերտի-
ֆիկացումը: Մշակված և առաջարկվող սպիտակուցային
ամինաթթուները հաջողությամբ կարող են կիրառվել
բժշկության և գյուղատնտեսության ոլորտներում:

- ՀՀ ԳԱԱ մոլեկուլյար կենսաբանության ինստիտու-
տում ավարտվել են գյուղատնտեսական կենդանիների
վիրուսային հիվանդությունների բուժման և կանխար-
գելման նպատակով մշակված իմունամոդուլյատորային
հատկություններով օժտված նոր «ինդուկտոր» պատ-
րաստուկի հակադարձադրային ազդեցության փորձար-
կումները: Պատրաստուկը փորձարկվել է ըստ ՀՀ գյու-
ղատնտեսության նախարարության ներկայացված չա-
փանիշների և ներկայումս ուղարկվել է ՌԴ՝ հետազո-
տումնասիրության և համապատասխան մասնագիտա-
կան եզրակացության նպատակով:

- ՀՀ ԳԱԱ Ա. Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկա-
յի ինստիտուտում առաջարկվել է քլոր չափաքանակով
«Բիոքսիլ» արդյունավետ ախտահանիչ միջոցի ստաց-
ման տեխնոլոգիա:

- ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստի-
տուտը, ՀՀ կառավարության պատվերով, Արագածի
հրաբխային զանգվածի հարավ-արևմտյան մասում կա-
տարել է հայկական նոր ատոմակայանի հարթակի տա-
րածքի երկրաբանական, մասնավորապես սեյսմիկ և
հրաբխային պայմանները գնահատող աշխատանքներ,
որին մասնակցել են արտերկրի ճանաչված գիտնական-
ներ, ինչը Միջազգային ատոմային գործակալության (ՄԱ-
ԳԱՏԵ) կողմից արժանացել է բարձր գնահատականի:

Միջազգային գիտափոխնիկական համագործակցություն

Միջազգային գիտափոխնիկական համագործակցու-
թյան նպատակը ՀՀ ԳԱԱ ինստիտուտների և անհատ գիտ-
նականների՝ միջազգային գիտահետազոտական դրա-
մաշնորհային ծրագրերին և միջոցառումներին առավել
ակտիվ մասնակցությանը նպաստելն է:

2011 թվականին այս ուղղությամբ կատարված աշխա-

տանքներն արդյունք են համակարգի 3 ստորաբաժա-
նումների՝ միջազգային կապերի վարչության, միջազգա-
յին գիտական տեխնոլոգիական ծրագրերի և սփյուռ-
քի բաժինների ներդաշնակ համատեղ աշխատանքի:
2011 թվականի ընթացքում արտասահմանյան երկրներ
գործողման է մեկնել ՀՀ ԳԱԱ 509 գիտաշխատող, որոն-
ցից գիտական միջոցառումների մասնակցել է 237-ը,
համատեղ աշխատանքներ է կատարել 183-ը, բանակ-
ցություններ է վարել և կոնսուլտացիաներ անցկացրել
89-ը: Նույնատիպ նպատակներով արտասահմանից հյու-
րընկալվել են 551 գիտնականի:

Շարունակվում է ԳԱԱ ինստիտուտների համագոր-
ծակցությունն արտասահմանյան և ԱՊՀ երկրների՝ Ռու-
սաստանի Դաշնության, Հունգարիայի, Բելառուսի, Ուկ-
րաինայի, Լիտվայի ակադեմիաների հետ: 2011 թ. ընթաց-
քում ԳԱԱ -ի 4 գիտաշխատող այցելել է ՌԳԱ կենտրոն-
ներ, 1 գիտաշխատող մեկնել է Հունգարիա և 2 ռուս ու
3 հունգարացի գիտնական ժամանել են ԳԱԱ ինստի-
տուտներ՝ վերապատրաստում անցնելու և համատեղ
հետազոտություններ կատարելու նպատակով:

Հաշվետու տարում ԳԱԱ համակարգում շարունակել
է գործել Եվրոպական Միության հետազոտությունների
և զարգացման 7-րդ շրջանակային ծրագրի (ԵՄ 7ԾՇ) կոն-
տակտային խումբը: Խմբի (բաժնի) գործունեության հիմ-
նական ուղղություններից մեկը ԵՄ 7ԾՇ -ի մասին ընդ-
հանուր իրազեկության բարձրացումն ու առավել ակտիվ
մասնակցության խթանումն է եղել:

Եվրամիության գիտական և տեխնոլոգիական զար-
գացման 7-րդ շրջանակային ծրագրի սկզբից մինչ այժմ
ՀՀ կազմակերպությունների մասնակցությամբ ընդհա-
նուր առմամբ ծրագրի տարբեր մրցույթներին ներկայաց-
վել են 137 նախագծերի առաջարկներ, որոնցից 30-ը
հաստատվել և ֆինանսավորվել են՝ մոտ 2,5 մլն եվրո
ընդհանուր գումարով:

2011 թ. ֆինանսավորված նախագծերից կարելի է ա-
ռանձնացնել ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման
պրոբլեմների ինստիտուտի, ֆիզիկական հետազոտու-
թյունների և էկոլոգամոնոսֆերայի հետազոտությունների
կենտրոնի համակարգում 3 նախագծերի առաջարկները:

Հարկ է նշել, որ ԳԱԱ ինստիտուտների այս 3 նախագ-
ծերի շնորհիվ մրցույթին հավանության արժանացած նա-
խագծերի քանակով Հայաստանի կազմակերպություննե-
րը զոհացուցիչ արդյունքի են հասել՝ զբաղեցնելով երկ-
րորդ տեղը՝ Ուկրաինայից հետո: Ուկրաինայի փաստ է նաև,
որ բնակչության մեկ միլիոն թվաքանակի համեմատ
ստացված դրամաշնորհների քանակով Հայաստանը
նույնպես առաջատար դիրքերում է, ինչը վկայում է մեր
երկրում միջազգային մակարդակով մրցունակ գիտա-
կան հետազոտությունների առկայության մասին: Այս հա-
ջողություններն ավելի շոշափելի կլինեին ինստիտուտ-
ներում միջազգային չափորոշիչներով գիտահետազո-
տական սարքավորումների և ներհամակարգի առկա-
յության դեպքում, ինչը թույլ կտար իրականացնել առա-
վել մրցունակ հետազոտություններ: Այսինքն՝ կարևոր-
վում է գիտահետազոտական ինստիտուտների սարքա-

վորումների բազայի արդիականացման և վերազինման
նպատակային ծրագրի իրականացման խնդիրը:

Սփյուռքի բաժին

Հաշվետու տարում միջազգային համագործակցու-
թյան կարևոր մաս են կազմել աշխատանքները սփյուռ-
քահայ արտասահմանյան անդամների հետ: ԳԱԱ համա-
կարգի կազմակերպությունների ղեկավարների և նրանց
միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ
հետազոտությունների և նոր ծրագրերի իրագործման,
ասպիրանտների համատեղ ղեկավարման, մասնագետ-
ների պատրաստման, համագործակցության պայմա-
նագրերի կնքման, համատեղ աշխատությունների պատ-
րաստման, ԳԱԱ տեղեկագրերի խմբագրական կազմե-
րում ընդգրկման, Հայաստանում կազմակերպվող գիտա-
ժողովներին և սեմինարներին մասնակցության, գիտա-
ժողովների կազմակերպման վերաբերյալ:

Արտասահմանյան անդամների իրականացրած հա-
մագործակցության և աջակցության արդյունքներից
հարկ է նշել.

● Մասնագետների պատրաստում և վերապատրաս-
տում.

● Համատեղ հետազոտությունների իրականացում և
առաջարկներ.

● Համատեղ աշխատանքների, գրքերի հրատարա-
կում.

● Մասնակցություն գիտական փորձաքննությանը:
ԳԱԱ հայազգի արտասահմանյան անդամներն
ընդգրկված են ԿԳԼ գիտության պետական կոմիտեի
փորձագետների տվյալների շտեմարանում, ակտիվորեն
մասնակցում են բյուջետային ֆինանսավորման համար
մրցույթային սկզբունքով կազմակերպվող հայտերի գի-
տական փորձաքննությանը:

Հայապահպանության գործում ներդրած ծանրակշիռ
ավանդի համար ԳԱԱ արտասահմանյան անդամ Սկրտիչ
Թումանյանը (Իրան) պարգևատրվել է „Ամանիա Շիրա-
կացի“, մեդալով:

Գիտական կադրեր

2012 թ. հունվարի 1-ի դրությամբ ԳԱԱ կազմում
ընդգրկված են 64 ակադեմիկոս և 61 թղթակից անդամ,
որոնցից 34 ակադեմիկոս և 30 թղթակից անդամ աշխա-
տում են ԳԱԱ համակարգից դուրս:

2012 թ. հունվարի 1-ի դրությամբ ԳԱԱ համակարգի
աշխատողների ընդհանուր թիվը 3974 է, այդ թվում՝ 2409
գիտական աշխատողներ են, որոնցից գիտության դոկ-
տորներ են 332, գիտության թեկնածուներ՝ 1130, գիտա-
կան աշխատողներ առանց գիտական աստիճանի՝ 947: Ե-
թե այս տվյալները համեմատենք նախորդ տարվա նույն
ժամանակահատվածի տվյալների հետ, ապա կտեսնենք, որ
տեղի է ունեցել ցուցանիշի նվազում 82-ով:

2011 թ. ԳԱԱ աշխատակիցները և ասպիրանտները
պաշտպանել են 9 դոկտորական, 63 թեկնածուական ա-
տենախոսություններ, այդ թվում՝ 27-ը հայցորդները, 8-
ը նախորդ տարիներին ասպիրանտուրան ավար-
տածները և 28-ը հաշվետու տարում ասպիրան- ➤ 3

ՄԵԾԱՀՌ-ՉԱԿ ԳԻՏՆԱԿԱՆԻ 90-ԱՄՅԱԿԸ

Նախագահ Մերժ Սարգս-
յանը մարտի 13-ին այցելել
է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
հասարակական-պետական
գործիչ Մերժեյ Համբար-
ձումյանին: Հանրապետու-
թյան ղեկավարը շնորհավո-
րել է ակնառու պետական
գործչին և գիտնականին՝
ծննդյան 90-ամյա հոբելյա-
նի առթիվ, մաղթել քաջա-
ռողջություն և հաջողու-
թյուններ:

Վաստակաշատ ակադե-
միկոսը գիտության զար-
գացման գործում ներդրած
նշանակալի ավանդի և
երկարամյա հասարակա-
կան-քաղաքական գործու-
նեության համար Նախա-
գահի հրամանագրով
պարգևատրվել է «Տիգրան
Մեծ» շքանշանով:



ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և ՌԴ

«Միավորված ավիաշինական կորպորացիա»-ն սպորադեցին Համաձայնագիր

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի
նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյա-
նը և Ռուսաստանի Դաշնության «Միավորված ա-
վիաշինական կորպորացիա» բաց բաժնետի-
րական ընկերության նախագահ, ՀՀ ԳԱԱ արտա-
սահմանյան անդամ Միխայիլ Պոդոսյանը ապ-
րիլի 20-ին ստորագրեցին 5-ամյա գիտափոխնի-
կական և ինովացիոն համագործակցության Հա-
մաձայնագիր: Համաձայնագրի նպատակն է ա-
ջակցել միմյանց՝ լուծելու Ռուսաստանի Դաշ-
նության և Հայաստանի Հանրապետության ա-
վիաշինական համալիրի պահպանման, մրցու-
նակության բարձրացման և գիտաարտադրա-
կան պոտենցիալի զարգացման ուղղված
խնդիրները, հետագա ինտեգրման պայմաննե-
րում միավորել ինտելեկտուալ, արտադրական
և ֆինանսական ռեսուրսները՝ ավիացիոն տեխ-
նիկայի ստեղծման հեռանկարային ծրագրերի ի-
րականացման համար:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ հաշվետու զեկուցումը

➤ 2 տուրան ավարտածները: Տարեկազմին մագիստրատուրայում սովորում էր 1078 մագիստրանտ, որոնցից 53-ը՝ պետական պատվերով:

Համակարգի հիմնական կադրային պոտենցիալը ձևավորում են բուհերի շրջանավարտները: Ակադեմիան, շահագրգռված լինելով բարձր որակավորմամբ մասնագետներ ունենալու հարցում, ակտիվորեն համագործակցում է հանրապետության բուհերի հետ: Համագործակցությունը ներառում է համատեղ գիտական հետազոտությունները, որոնք իրականացվում են համատեղ գործող գիտական և ուսումնական կառույցների օգնությամբ: Նման համագործակցություն է հաստատվել ԵՊՀ-ի, Ռուս-Հայկական, Ճարտարագիտական, մանկավարժական համալսարանների, գյուղատնտեսական ակադեմիայի և այլ կառույցների հետ:

Գրադարաններ

ԳԱԱ համակարգում գործում է 30 ակադեմիական գրադարան՝ 1 հիմնարար գիտական գրադարան և ակադեմիական 29 ճյուղային-մասնագիտական գրադարաններ: Նրանք իրենց հավաքածուներում ունեն 3020163 գրադարանային միավոր, որից 860218՝ եվրոպական լեզուներով:

Գիտաշխատողների, ուսանողների և ասպիրանտների հարցումներն առավել լիարժեք բավարարելու համար ՀԳԳ-ն շարունակում է ընթերցողներին տրամադրել մի շարք բարձրարժեք էլեկտրոնային ամսագրային հավաքածուներ: Այսպես, ՀԳԳ-ն իրականացրել է «Oxford» հրատարակչության էլեկտրոնային պաշարների բաժանորդագրություն, որը կշարունակվի մինչև 2013 թ. ապրիլի 30-ը: 2011 թ. ընթացքում գրադարանն իր ներքին ռեսուրսների հաշվին, ԳԱԱ ինստիտուտների աշխատակիցների պատվերով, ընդունել և տրամադրել է 123 էլեկտրոնային գիտական հոդվածների պատվերներ:

Հաշվետու տարում էլեկտրոնային քարտարան է մուտքագրվել 36465 գրադարանային միավոր՝ գիրք, պարբերական, հրապարակում և սեղմագիր:

Ծավալուն աշխատանք է կատարվել հնատիպ և վաղ շրջանի գրքերի, ակադեմիական ամսագրերի թվայնացման և գրադարանի կայքէջում տեղադրման գործում: Ավարտվել է հայերեն հնատիպ գրքերի թվայնացումը (96443 էջ): Ներկայումս բոլոր այդ գրքերը հասանելի են համացանցում՝ գրադարանի կայքէջից: Թվայնացվել են նաև հավաքածուների՝ 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի սկզբի թերթերը՝ թվով 18 անուն: Ավարտվել է վաղ շրջանի (1801-1850 թթ.) 331 անուն գրքի թվայնացումը և ընթացքի մեջ է համացանցում դրանց տեղադրման գործընթացը: Ընթացքի մեջ է նաև 1851-1920 թթ. հայատառ գրքերի (476 անուն, 94305 էջ) թվայնացումը: Բոլոր այս աշխատանքները նվիրվում են հայկական տպագրության 500-ամյակին:

Նկատի ունենալով հիշյալ բնույթի աշխատանքների ծավալի անընդհատ աճը՝ գրադարանը տարբեր դրամաշնորհների միջոցով ձեռք է բերել թանկարժեք սարքավորում, որն ավելի կարագացնի թվայնացման գործընթացը: Գրադարանն աջակցում է նաև համացանցում ակադեմիայի 3 էլեկտրոնային ամսագրերի հոդվածների տեղադրմանը:

«Գիտություն» հրապարակչություն

«Գիտություն» հրատարակչությունն իրականացրել է համակարգի ինստիտուտների և ակադեմիական գիտական հանդեսների հրատարակչական-տպագրական աշխատանքները: Հրատարակչությունը 2011 թ. հրատարակել է 107 անուն գիրք և հանդես, որոնցից 50-ը գիտական աշխատություններ են՝ 1100 տպագրական մամուլ ծավալով: ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի որոշմամբ լույս տեսած գրքերի և հանդեսների ընդհանուր ծավալը կազմել է 1545 տպագրական մամուլ:

2011 թ. գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի Կիևում կազմակերպած «Գիտական գիրք. լավագույն գիտահրատարակչական նախագիծ» ամենամյա միջազգային մրցույթում հրատարակչությունը պարգևատրվել է «Հաղթողի դիպլոմով» 4. Հարությունյանի և Հ. Պողոսյանի «Вклад армянского народа в Великой отечественной войне» (1941-1945)՝ գրքի համար: «Գրքարվեստ 2011» հանրապետական 4-րդ մրցանակաբաշխության ժամանակ հրատարակչությունը արժանա-

ցել է ՀՀ մշակույթի նախարարության առաջին կարգի դիպլոմների՝ «Տիգրան Մեծ» և Ս. Սարգսյանի «Կանչ» գրքերի հրատարակչության համար: Հաշվետու տարում, շրջանցելով ֆինանսական սուղ պայմանները, հրատարակչության տպարանի համար ձեռք է բերվել 2 նմուշի նոր սարքավորում և կապիտալ վերանորոգվել է «Հեղեղ-բերդ» տպագրական մեքենան:

Գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորում

2011թ. ՀՀ ԳԱԱ ամբողջ համակարգի համար պետական ֆինանսավորումը կազմել է 4595426.7 հազար



դրամ, որից 4241126.3 հազար դրամը բազային ֆինանսավորումն է, իսկ 280910.4 միլիոն դրամը՝ բեմատիկ ֆինանսավորումը, նպատակային ֆինանսավորումը մնացել է անփոփոխ՝ 73 390 միլիոն դրամ:

...2011թ. ինստիտուտների աշխատակիցներն աշխատանքներ են իրականացրել 84 միջազգային ծրագրերով, 600 միլիոն դրամ ֆինանսական ծավալով: Բացի դրամաշնորհային ակտիվ գործունեությունը՝ մի շարք ինստիտուտներ կատարել են նաև պայմանագրային աշխատանքներ: Հիմնականում դրանք գիտական արդյունքների ներդրմամբ ստեղծված նոր սարքեր և նյութեր են, վճարովի տարբեր ծառայություններ և վարձավճարներ:

Արտաբյուջետային միջոցների ընդհանուր ծավալը կազմել է 2,2 միլիարդ դրամ, որը տարեկան ընդհանուր ֆինանսավորման 33 տոկոսն է: Սա լավ ցուցանիշ է անգամ զարգացած առաջավոր երկրների համար: Արտաբյուջետային միջոցներն էապես կապվելանան, եթե մոտակա տարիներին որոշ ինստիտուտների ինֆրակառուցվածքները համալրվեն ժամանակակից գիտատեխնիկական միջոցներով: Հակառակ դեպքում, ոչ միայն չենք կարողանա կիրառական բնույթի նույնաժամկալ աշխատանքներ կատարել, այլև կնվազեն հիմնարար բնույթի գիտական արդյունքները, ինչն անմիջականորեն կազդի տարածաշրջանում մեր ունեցած առաջատար դիրքի վրա:

...Վերջերս ենք ավարտել բանակցությունները Ռուսաստանի Դաշնության հզոր միավորված ավիաշինական կորպորացիայի հետ, շուտով կստորագրենք փոխադարձ համագործակցության մասին պայմանագիր: Մեր մի շարք ինստիտուտներ, մաթեմատիկական և տեխնիկական, քիմիական և երկրի մասին, բնական գիտությունների բաժանմունքներն առաջարկել են բազմաբնույթ համատեղ աշխատանքների ցուցակ և լիաժույս ենք, որ շուտով կկնքվեն արդեն տնտեսական պայմանագրեր այդ կորպորացիայի հետ:

Ակնկալվում են մեծածավալ աշխատանքներ Ռուսաստանի ԳԱ Կելդիշի անվան ինստիտուտի, Ռոսկոսմոսի և ֆիզիկայի բաժանմունքի ինստիտուտների հետ: ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտն արդեն իսկ պայմանագրեր է կնքել «Սամսունգ» ընկերության հետ:

Սոցիալական խնդիրներ

2011 թվականին սոցիալական հարցերը, հնարավորությունների սահմաններում, եղել են ուշադրության կենտրոնում: Ամբողջ համակարգի միջին աշխատավարձը պետական բյուջեից կազմել է 72 000 դրամ: Եթե հավելենք նաև արտաբյուջետային միջոցները, ապա այն կկազմի 80-85 հազար դրամ: Սակայն հարկ է հիշատակել, որ արտաբյուջետային միջոցներից ոչ բոլորն են օգտվում, այն բաշխվում է ոչ հավասարաչափ: Պետք է նկատել նաև, որ հումանիտար ուղղվածության ինստիտուտների աշխատակիցների աշխատավարձն ամենացածրն է ամբողջ համակարգում: Սոցիալական բնույթի բազմակողմանի գործունեություն է ծավալել «Ակադե-

միայի գիտության զարգացման» հիմնադրամը: Այս խողովակով համակարգի 21 կազմակերպությունների աշխատակիցներ ստացել են 5,8 միլիոն դրամի նյութական օգնություն: Այս բնույթի օգնությունների ծավալները կաճեն, եթե կարողանանք ավելացնել հիմնադրամի մուտքերը:

Սոցիալական խնդիրների թնջուկում կարևորվում է աշխատակիցների աշխատանքային պայմանների բարելավման հարցը: Ցավոք, այս ուղղությամբ էական առաջընթաց չի գրանցվել, որովհետև 2-3 տասնամյակի վերջին վերանորոգվել ինստիտուտների մասնաշենքերը, լաբորատորիաները, գիտության ամբողջ ինֆրակառուցվածքը:

Ծառացած խնդիրների լուծմանը կնպաստի որոշ ազատ տարածքների իրացումից ստացված միջոցների ներդրումը զարգացման ծրագրերում, որոնց համար արդեն ստացել ենք Հանրապետության նախագահի համաձայնությունը: Սոցիալական դժվար լուծելի խնդիրներից է բնակարանային պրոբլեմը, որն առավել խոցելի է հատկապես երիտասարդների դեպքում: Հանրապետություն նախագահի աջակցությամբ երիտասարդ գիտաշխատողների համար 200 բնակարան ունեցող բնակելի շենք է կառուցվում նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի տարածքում:

Նախագահի մեկ այլ աջակցությամբ 50-60 բնակարան ունեցող բնակելի հաջորդ շենքը կսկսվի կառուցվել այս տարի՝ ինֆորմատիկայի ինստիտուտի աշխատակիցների համար:

Հարգելի ներկաներ, վերջին տարիներին գիտական հանրության կողմից մշակվել են չափանիշներ, որոնք հնարավորություն են տալիս գնահատել անհատ գիտաշխատողների և նրանցից կազմված կառույցների գիտական ակտիվությունն ու գործունեության արդյունավետությունը: Հիշատակեն հիմնական երկուսը՝ համաշխարհային զգալի հեղինակություն և համեմատաբար շատ ընթերցող ունեցող գիտական ամսագրերում հրատարակված աշխատանքների թվաքանակը, որը որոշում են մի քանի հեղինակավոր շտեմարաններ ունեցող ընկերություններ և, այսպես կոչված, ցիտման ինդեքսը (թե ինչքան հղումներ են կատարվել հեղինակի տվյալ աշխատանքին կամ բոլոր աշխատանքներին): Այս չափանիշները թույլ են տալիս կարծիք կազմել գիտական արդյունքների որակի և գիտաշխատողների ակտիվության մասին: Հիմնվելով դրանց վրա՝ միջազգային անկախ փորձագիտական կազմակերպությունները գնահատել են մեր և տարածաշրջանային երկրների գիտական հետազոտությունների արդյունավետությունը:

Տպագրված բարձր վարկանիշային հոդվածների թվով մենք գերազանցում ենք տարածաշրջանի փաստորեն բոլոր երկրներին (Ադրբեջան, Վրաստան, Ղազախստան, Ուզբեկստան, Թուրքմենիա, Տաջիկստան, Դոգատան), բացի Իսրայելից, որը գիտական հետազոտություններին տարեկան տրամադրում է 5 մլրդ ԱՄՆ դոլար:

Այսպիսով, ի մի բերելով տարբեր աղբյուրներից ստացված ցուցանիշները, կարելի է պնդել, որ Հայաստանի Հանրապետության գիտությունն առաջատարն է տարածաշրջանում, կատարվող հետազոտությունների որակն ամենաբարձրն է ԱՊՀ երկրների համեմատ և, ամենից կարևորը, գիտական հետազոտությունների մակարդակով գտնվում ենք աշխարհի միջին մակարդակի վրա: Մակարդակի անկումը 2010-2011 թվականներին խիստ մտահոգիչ է, այն կապված է գիտության ինֆրակառուցվածքի ֆիզիկական և բարոյական մաշվածության, միջին սերնդի գիտնականների թվաքանակի նվազման հետ:

Հարգելի ներկաներ

Պարզ է, որ մեկ զեկուցման շրջանակներում դժվար է անդրադառնալ համակարգի բոլոր ստորաբաժանումների ձեռքբերումներին և բացթողումներին: Կարծում եմ, ակտիվ ու շահեկան գործնական քննարկում կծավալվի, և Ձեր ելույթներում կնշեք ու կխոսեք հետախույս մեր առաջնահերթ անելիքների մասին, ինչը կնպաստի գիտելիքահենք մեր պետության զարգացմանը:

(ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի հաշվետու զեկուցումը ուղեկցվում էր լուսապատկերների ցուցադրմամբ և մանրամասն մեկնաբանություններով)

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի հաշվետու զեկուցումը տպագրվում է մասնակի կրճատումներով:



ՀՀ ԳԱՍ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱՍ սփյուռքի բաժինը

ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ, երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիգորի Գաբրիելյանցի ողջ կենսագրությունը մեծանուն հայի և գիտության նվիրյալի փայլուն օրինակ է:

Գրիգորի Գաբրիելյանցը ծնվել է 1934թ. փետրվարի 2-ին Բաքվում: Նրա նախնիները ծնունդով Շամախեցի են: Ապրում էին լեռնահովտում ծվարած մի գյուղում և խաղող մշակում: Յոթ տարեկանից պատանի Գրիգորյանցը ամառները անց էր կացնում հայրենի գյուղում: Իր իսկ խոսքերով՝ դպրոցական տարիներին ոչնչով աչքի չի ընկել:

Երկրորդ համաշխարհային պատերազմի հենց առաջին օրերից նրա հայրը՝ Արկադի Գաբրիելյանցը, մեկնեց ռազմաճակատ. մայրը ստիպված էր աշխատել երկու հերթափոխով, որպեսզի կարողանա ապահովել ընտանիքի կարիքները:

Դպրոցն ավարտելուց հետո Գրիգորի Գաբրիելյանցն ընդունվում է Ադրբեջանական ԽՍՀ Նավթի ու գազի ինս-



լին թեմը 2004 թ. Գրիգորի Գաբրիելյանցին պարգևատրեց «Սուրբ Սարգիս» շքանշանով: 2010 թ. Գաբրիելյանցը հանդես եկավ մեկ այլ նախաձեռնությամբ. Մոսկվայում իրականացրեց բարեգործական աննախադեպ մի ձեռնարկ: Հավաքեց աշխարհի տարբեր երկրների նկարիչների գործեր՝ որպես նվեր Լեռնային Ղարաբաղ ուղարկելու համար:

Գրիգորյանցը մի քանի տարի շարունակ աջակցում է գրականագիտական նկարագրող «Արագած» ամսագրի տպագրմանը, որի էջերում նյութեր են տպագրվում Հայաստանի պատմության և մշակույթի մասին:

Գրիգորի Գաբրիելյանցը 130 բացառիկ հանքաքարերից բաղկացած իր հավաքածուն նվիրեց Արցախի հայրենագիտական թանգարանին:

Գրիգորի Գաբրիելյանցը հեղինակ է 153 գիտական հոդվածի, 7 մենագրության և 2 դասագրքի: Նա 16 գյուղի հեղինակ է, նրա ղեկավարությամբ պաշտպանվել են թեկնածուական 17 և դոկտորական 3 ատենախոսություններ: Նա Ռուսաստանի նավթի և գազի ակադեմիայի գիտական խորհրդի անդամ է, պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, ԽՍՀՄ Պետական մրցանակի դափնեկիր է:

Հաշվի առնելով Գրիգորի Գաբրիելյանցի գիտական և մանկավարժական մեծ վաստակը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2008 թվականին նրան ընտրել է ԳԱՍ արտասահմանյան անդամ:

Վերջին տարիներին Գրիգորի Գաբրիելյանցը լրջորեն զբաղվում է Արցախի երկրաբանության հարցերով: Նրա նախաձեռնությամբ երկրաբանական գիտությունների ինստիտուտի աշխատակիցների հետ պատրաստվել և տպագրվել է «Геология и минеральные ресурсы Нагорно-Карабахской Республики» («Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երկրաբանությունը և հանքային պաշարները») գիրքը: Ավարտում է «Նավթի հետախուզման տեսական հիմունքները» դասագիրքը:

Գրիգորի Գաբրիելյանցի կյանքի ամենահուզիչ քայլը թերևս այն է, որ նա թողնելով իր ողջ աշխատանքային գործունեությունը Ռուսաստանում, վերադարձել է իր ակունքներին: 2011 թ. սեպտեմբերի 7-ին Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակյանը հրաման է ստորագրել Գաբրիելյանցին ԼՂՀ նախագահի խորհրդականի պաշտոնում նշանակելու վերաբերյալ:

Վերջին հարցազրույցներից մեկի ժամանակ Գրիգորի Գաբրիելյանցը կարծես պատասխանեց, թե ինչով է պայմանավորված հենց ազատ Արցախում ապրելու և աշխատելու ձգտումը. «Պապիկս անդադար կրկնում էր. «Զմռանաս, բալիկ ջան, մենք ղարաբաղցի ենք»:

Գրիգորի Գաբրիելյանցը այսօր էլ մեծ ջանքեր է ներդնում երկրաբանության ոլորտի զարգացման գործում և սերտորեն համագործակցում է Հայաստանի գիտական շրջանակների համապատասխան մասնագետների հետ:

Գոռար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնացու, դոցենտ
ՀՀ ԳԱՍ սփյուռքի բաժնի գիտաբարոյաբան

Գրիգորի ԳԱԲՐԻԵԼՅԱՆՑ

տիտուտ, որը 1956 թ. ավարտում է գերազանցությամբ և գործուղվում Թուրքմենիա: Այստեղ իրականացնում է նրա երազանքը. զբաղվում է երկրաֆիզիկական հետազոտություններով, և արդեն 25 տարեկանում դառնում է Թուրքմենիայի գլխավոր երկրաբանը: Գրիգորի Գաբրիելյանցի գլխավոր առաքելությունն էր Կարա-Կումուլ հայրենաբերել գազի հանքավայրեր և խմելու ջրի պաշարներ:

Նա ինքնամոռաց նվիրվում է իր սիրած աշխատանքին, որը շուտով տալիս է իր պտուղները: Գրիգորի Գաբրիելյանցը պատմում է, թե նավթի հայտնաբերման կապակցությամբ առաջին անգամ ինչպես իրականացավ իր կանխատեսումը: «1959թ. մայիսյան մի օր անապատում նստած ընթերցում էի «Երեքը մակույկում, չհաշված շանը» գիրքը և հենց այդ պահին Կարա-Կումուլ ժայթքեց նավթի առաջին շատրվանը: Պատկերացնում եք երջանկության ինչպիսի գագոցություն ունեցա ես: Հսկայական Կարա-Կումուլն ընտրել է հենց այն փոքրիկ հողակտորը և չսխալվել: Դա նույնն է, ինչ առաջին երեխայիդ ծնունդը»:

Այս հանքավայրի բացահայտումը հիրավի մեծ ճանաչում բերեց Գաբրիելյանցին. նրան հրավիրեցին Մոսկվա՝ աշխատելու աշխարհահռչակ երկրաբանների և աշխարհագրագետների հետ:

1963 թ. նա ավարտեց համամիութենական երկրաբանահետախուզական նավթային գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրան և մեծ հաջողությամբ պաշտպանեց գիտական ատենախոսությունը: Մոսկվա ժամանելուց կարճ ժամանակ անց Գաբրիելյանցը նշանակվում է բնական գազի համամիութենական ինստիտուտի գլխավոր երկրաբան:

1965-1969 թթ. Գաբրիելյանցը արդեն բնական գազի գիտահետազոտական համամիութենական ինստիտուտի գիտական գծով փոխտնօրենն էր: Միևնույն ժամանակ նա զբաղվում էր գիտամանկավարժական գործունեությամբ:

յամբ: 1968-1987 թթ. դասավանդել է Մոսկվայի նավթի և գազի ինստիտուտում: 1969-1972 թթ. Մոսկվայի նավթաքիմիական և գազի արտադրության ինստիտուտի դոցենտ էր, 1972-79 թթ. երկրաբանական հետախուզական նավթային ինստիտուտի բաժանմունքի ղեկավար: 1987-1989 թթ. Գաբրիելյանցը գլխավորեց համամիութենական նավթային երկրաբանահետախուզական գիտահետազոտական ինստիտուտը, իսկ 1989-1991 թթ. նա հասավ իր կարիերայի բարձրակետին՝ ստանձնելով ԽՍՀՄ երկրաբանության և ընդերքի պահպանման նախարարի պաշտոնը:

Գրիգորի Գաբրիելյանցը Հայաստանի հետ առաջին անգամ ծանոթացել է Կոն Բակչիի գրքերի շնորհիվ: Այնուհետև, Դելիում տեղի ունեցած աշխարհագրական միջազգային կոնգրեսի ժամանակ Գրիգորյանցը հանդիպում է Հայաստանից մեկնած աշխարհագրագետների հետ, ովքեր էլ նրան հրավիրում են Հայաստան: Գրիգորյանցը մեծ սիրով ընդունում է առաջարկը և որոշ ժամանակ անց նա արդեն Հայաստանում էր: Այստեղ նրան ուղեկցում էր Հայաստանի երկրաբանության և ընդերքի պահպանման վարչության պետ Է. Գուլյանը: Մեծանուն գիտնականը առաջին անգամ իրեն զգաց իր տանը: Դրանից հետո ամեն տարի 2-3 անգամ Գրիգորյանցը այցելում էր Հայաստան՝ արդեն ոչ թե հիմնալու տեսարժան վայրերով, այլ համագործակցելու հայ երկրաբանների ու աշխարհագրագետների հետ, օգնելու Արցախի իր գործընկերներին:

Հատկաշնակա է, որ գիտամանկավարժական բեղուն գործունեությունից զատ, Գաբրիելյանցը ակտիվորեն զբաղվում է նաև բարեգործությամբ: «Իմ առաջին բարեգործական քայլը Պյատիգորսկում հայկական եկեղեցու կառուցմանն աջակցելն էր, իմ քայլով ես խրախուսեցի տեղաբնակ հայերին, որպեսզի նրանք ևս մասնակցեն այս գործընթացին»: Ի նշան շնորհակալության Հայ Առաքելական եկեղեցու Ռուսաստանի հարավա-

«Պատմական Անին սպառում է իր հյուրերին»

Թուրքական Անատոլիա ինֆորմացիոն գործակալությունը իր կայքում տեղադրել է հայտարարություն, որով աշխարհի զբոսաշրջիկներին հրավիրում է այցելել Անին:

Սույն գովազդը վերնագրված է՝ «Պատմական Անին սպառում է իր հյուրերին»: Տեղադրված են առավել հայտնի եկեղեցիների, տաճարների, պատմական նշանավոր հուշարձանների լուսանկարները: Այս գովազդը մեր փառահեղ Անիի մասին է, հայ ժողովրդի երբեմնի հզոր մայրաքաղաքի, մեր պատմական պերճաշուք քաղաքի, որի Հայաստանի մայրաքաղաք հռչակելու 1050 տարին մենք հպարտ արժանապատվությամբ նշեցինք վերջերս:

Թուրքական գովազդում նշվում է, որ «Մետաքսե մեծ ճանապարհին ընկած Անին մի ժամանակ եղել է միջազգային առևտրի կարևոր խաչմերուկ և պահպանում է մի քանի քաղաքակրթությունների հետքերը»: Սակայն ո՞ր քաղաքակրթությունների: Գովազդում բառ անգամ չկա Հայաստանի, հայերի, հրաշք Անին կառուցողների մասին: Կարծես թե Անին ընկել է երկնքից, և այստեղ ապրել են այլմոլորակայինները:

Թուրքերը, որ տառապում են Արևմտյան Հայաստանում հայկական հետքը իսպառ ոչնչացնելու գազանային մոլուցքով, մեր հուշարձանների վրայից մաքրում, քերում, ջնջում են հային ու հայկականը հիշեցնող ամեն մի վկայություն:

Գովազդում տեղադրված լուսանկարների շարքում կա Մանուշեր մզկիթի լուսանկարը: Սա միակ վերականգնված կառույցն է՝ մուսուլմանական մշակույթի հուշարձան: Թող զբոսաշրջիկները իմանան՝ թուրքերը 10-րդ դարից այստեղ են եղել: Մզկիթի



պատին փակցված տեղեկատու ցուցանակում գրված է՝ «Կառուցել է Գազիկ թագավորը»: Եվ լռություն այն մասին, թե ով էր այդ Գազիկ արքան, ո՞ր պետության թագավորն էր Գազիկը, որ ժողովրդի վրա էր թագավորում...

Եվ որի հրամանով Անիի նախկին իջևանատունը վերածվեց մզկիթի:

Այս մասին Անատոլիա գործակալությունը լռում է: Միանգամայն օրինաչափ պահվածք, որ բնորոշ է թուրքերին. ոչնչացնել, ջնջել Հայաստան անունը, հայկական ներկայությունը իր բնօրրանում, պատմական հայրենիքում:

**Որին Հայաստան, Հայք էին ասում,
Փարավոններից մինչ Պուանկարեն,
Հիմա օսմանի թոռները բոհ
Վիլհելմ կայսեր հետ ուզեցին քերել
Դարերով հնչող «Հայաստան» բառի
Բոլոր տառերը,
Նրա ապագան
Մշտահոտ ներկան:**

Եվ մինչև անգամ... անցած դարերը:

Որպեսզի հայտարարեն, որ մեր երկիրը իրենց հողն է, որ մեր հրաշափառ հուշարձանները, որոնք ավերված, բայց դեռ կանգուն են, աշխարհի զբոսաշրջիկներին ներկայացնեն որպես իրենցը: Եվ սա հաստատելու համար, որ իրենք բնիկ են, եկվոր չեն, և անգամ քրիստոնեական հազարավոր հուշարձանները թուրքն է շինել... Ինչպիսի՞ անպատկառություն, լկտիություն, անամոթություն: Բայց մի՞թե թուրքը ամոթ ունի...

Հայ ժողովրդի ազգագրական ինքնատիպ մի խումբը վաղ ժամանակներից բնակություն է հաստատել Լեռնային Կիլիկիայի գեղատեսիլ բնության գրկում, որը կոչվել է Հարգան կամ Հաճըն: Վերջինս, ըստ ժողովրդական ստուգաբանության, «աճել, բնակիչներով շատանալ, բարգավաճել» բառից է ծագել:

Հաճընցիներն այնտեղ դարերով ապրել են խաղաղ ու ստեղծագործ կյանքով:

1915 թ. Հայոց ցեղասպանության ընթացքին Հաճընի հայերը տեղահանվեցին, և նրանց մեծ մասը Դեյր-էլ-Զորի անապատում նահատակվեց:

Անդրադառնալով պատմական իրադարձություններին՝ հարկ է նշել, որ դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի օրերին՝ 1916 թ., դաշնակից տերությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի ներքին

րակության նախագահ Լուրսի փաշային հղած հեռագրում գրել է. «Ես հպարտ եմ իմ հրամանատարութեան տակ հայկական զօրամաս ունենալուս համար: Նրանք կռուեցին փայլուն կերպով եւ մեծ բաժին ունեցան յաղթանակի մէջ»:

Պատերազմից հետո կնքված Արի պայմանագրով Կիլիկիայի վրա հաստատվելու էր Ամստամի երկրների հսկողությունը, և թուրքական զորքերն իբր արդեն դուրս էին բերվելու Կիլիկիայից: Դեյր-էլ-Զորի, Ռաս ուլ Այնի և այլ կենդանի գերեզմանոցներից հրաշքով փրկված, ուժասպառ, հյուծված և ունեզրկված հայ քաղաքացիները աստիճանաբար գալիս, տեղավորվում էին Կիլիկիայում: Նրանք, ապագայի նկատմամբ վառ հույսով ու հավատքով, սկսում են վերականգնել ավերվածը, մշակել խոպանացած այգիները: Սակայն

1920 թ. ապրիլի 1-ին թուրքերը պաշարում են Այնթապը: Պատերազմի ավարտից և զինադադարից հետո այնտեղ վերաբնակված շուրջ 10.000 այնթապցիների և 8.000 սեբաստացի հայ զաղթականների հազիվ խաղաղված կյանքը նորից է փոթորկվում: Այնթապի հայերն անցնում են ինքնապաշտպանության: Տեղում Ազգային միությանը կից ստեղծվում է Զինվորական կենտրոնական մարմին՝ Ադուր Լևոնյանի ղեկավարությամբ: Վերջինս հաշվառման է ենթարկում եղած 750 կռիվների զենքն ու զինամթերքը և կազմակերպում ռուսներ պատրաստելու գործը:

Այդ ընթացքում Կիլիկիայի գրավման ընդհանուր հրամանատար Գոգան օդու Դոդանը բեյն իր բազմահազար զորքով պաշարում է Հաճըն քաղաքը, որի 35.000 հայ բնակիչներից Մեծ եղեռնից փրկվել

Վերջինս ՍՎԱԶԼՅԱՆ. Բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

ՀԱՃԵՆՑԻՆԵՐԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

պայմանավորվածությամբ (Սայբս-Պիկո), Թուրքիայի պարտության դեպքում, 2.600.000 հեկտար մշակովի, բերքառատ հողեր ունեցող Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիայի հովանավորյալը: Անգլիայի և Ֆրանսիայի իշխանությունները Հայկական ազգային պատվիրականության հետ նախապես համաձայնվել էին, որ եթե հայ կամավորները կռվեն Թուրքիայի դեմ, հաղթանակից հետո հայերին կտրվեն քաղաքական լայն հնարավորություններ, և հայ կամավորները կդառնան նորակազմ ինքնավար Հայկական Կիլիկիայի քաղաքացի

թուրքերին հաջողվում է լեզու գտնել դաշնակից տերությունների հետ և ստիպել Ֆրանսիացիներին՝ իրենց խաղաղապահ զորքերը դուրս բերել Կիլիկիայից:

Ֆրանսիական զինվորական վարչությունը ոչ միայն լուրջ միջոցներ չի ձեռնարկում հայերի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, այլև տեղերում իշխանությունը թողնում է թուրք զինվորական պաշտոնյաների ձեռքին, և նրանք չեն զինաթափվում:

Զճանաչելով Արի պայմանագիրը և օգտվելով Ֆրանսիական զինվորական

էին միայն 6.000: Դոդան բեյն էլ եկավ, մտավ Հաճըն... Ափսոս եղավ քեզ, հսկա՝ Հաճըն... Այնտեղ թալանեցին մեր ունեցվածքը...

Ոտատակ գնաց անտե՛ր հայր: Հակառակորդի կարծիքով «Կիլիկիո հայկական միջնաբերդը՝ Հաճընը, հիմնովին կործանելն ու բնաջնջելը մեկ ժամկա գործ էր և անմշան հարձակումով մը պիտի կրնան թաղել 6.000 հայությունը»: Սակայն հաճընցիները լի էին վճռականությամբ: Նրանք իրենց կառավարիչ փաստաբան Կարապետ Չալյանի ղեկավարությամբ կազմում են Հաճընի ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդը: Պաշտպանության հրամանատար են ընտրում Զորավար Անդրանիկի զինակից սպա Սարգիս ճեպեճյանին: Կազմակերպում են 4 վաշտ, 60 հեծյալից բաղկացած հեծելազոր: Հաճընն ու իր շրջակայքը բաժանում են պաշտպանական 4 շրջանների: Փորում են խրամատներ և այլ ամրություններ, մարտական տրամադրությունը համակում է բոլորին: Ամենուրեք հնչում են ազատատենչ երգեր:

Հառա՛ք, հառա՛ք, հաճընցիներ,

Մեր ռիսերիմ թուրքն է եկել,

Հառա՛ք, կռվե՛նք՝ ի զե՛ն, ի զե՛ն, Տեսնենք թշնամին ի՛նչ կուզե:

Զենք կրելու ընդունակ 16-50 տարեկան 1.200 տղամարդկանց բաժանվում է եղած-չեղած 132 հրացանը: Հետագայում ձեռք է բերվում նաև երեք հարյուր հրացան: Ահա թե ինչու զենքի խիստ կարիք զգացող հաճընցիներն անհամբերությամբ սպասում էին Ադանայի Ազգային միության միջոցով դրսից ակնկալվող օգնությանը, որի շնորհիվ ոչ միայն զենք ու զինամթերք, այլև կռիվող նոր ուժեր պիտի հասնեին: Վերջապես երկնքում հայտնվում է բաղձալի օդանավը:

Օդանավն եկավ մեծ ավետիսով, Մեր սրտերը լցվան ուրախ հույսերով, Թափառին բոլոր մարտիկներն անզեն. Անոնք հոգիով թուրք ջարդել կուզեն: Եղբայրներն արդեն նամակ գրեցին. «Կռվեցե՛ք, եղբա՛յրք, կհասնինք»,

- ըսին,

Սակայն ի՛նչ խաբար, օրերնիս անցան. Հազար հոգիեն երկուք չերևցան:

(Շարունակելի)



զինվորներ:

Ուստի թուրքական բանակից, քաղաքի ճամփաներից ու տարբեր վայրերից, նույնիսկ հեռավոր Ամերիկայից ժամանած հայ երիտասարդները (մուսալեռցի, այնթապցի, մարաշցի, քեսաբցի, հաճընցի, հուսեմիկցի, չնգուշցի, սեբաստացի, խարբերդցի, արաբկիրցի և այլն) զինվորագրվում են Ֆրանսիական բանակին՝ ստեղծելով Արևելյան (Հայկական) լեգեոնը: Հայ կամավորներն իրենց անմեղ նահատակ հարազատների վրեժով լցված, արհամարհելով մահը, պարտության են մատնում թուրք-գերմանական զորքերին՝ իրագործելով Արարայի փայլուն հաղթանակը Նաբլուսի՝ Պաղեստինի մոտ: Պատմական այդ իրադարձությունները ևս իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել ժողովրդական երգերի մեջ:

Հայ քաջարի լեգեոնականներն արժանանում են Ֆրանսիական և բրիտանական հրամանատարության դրվատանքին: Գեներալ Ալեմբին, 1918 թ. հոկտեմբերի 12-ին, Հայ ազգային պատվի-

վարչության անվճարականությունից և թուլությունից, թուրքական զորքերն ու տեղի չեթներն իրենց զենքն ուղղում են Կիլիկիայի հայության դեմ:

1920 թ. հունվարից թուրքական զորքերը գրոհում են Կիլիկիայի հայկական բնակավայրերը: 22 օր տևող կատաղի մարտերում Մարաշ քաղաքի հայերը կոտորվում են, ու քաղաքը՝ մոխրացվում:

Պատմական այդ սահմնեցուցիչ իրադարձությունների անմիջական տպավորությունների տակ է հորինվել ժողովրդական սեղմ, բայց պատկերավոր երգը.

Ավա՛դ, Մարաշին Մարաշ են ասում, Մարա՛շ, քեզ ինչպե՛ս են Մարաշ ասում, Երբ քո մեջ եկեղեցի են հրկիզում, Եկեղեցու մեջ՝ հայեր մոխրացնում:

Մարաշի կոտորածին զոհ են գնում շուրջ 13.000 հայեր: Այնուհետև ողջ մնացած 8.000 մարաշցիներ Ուրֆայի 6.000 հայ բնակչության հետ բռնում են գաղթի ճամփան՝ սաստիկ բուքին ու սառնամանիքին՝ անհաշիվ զոհեր տալով ճանապարհին:

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Էմիլի Կարլիե «Կոտորածների մեջ»

Ընթերցողին է ներկայացված Թուրքիայում Ֆրանսիայի հյուպատոսի կնոջ՝ Էմիլի Կարլիեի «Կոտորածների մեջ» հուշագրությունը, որը պատմական եղելությունների, ակնհաստեսի կողմից իրական դեպքերի ճշմարտացի գրառում է և վկայություն այն ամենի, ինչ տեսել և գրի են առել Կարլիե հյուպատոս ամուսինները:

Պատմական առումով օտարների կողմից սառաջին լուրջ վկայությունն է 1894-95 թթ. հայկական ահավոր կոտորածների, որոնք ձեռնարկեց սուլթան Համիդը, և որոնք դարձան 1915 թվականի Հայոց մեծ ցեղասպանության սկիզբը: Ստորև մեր ընթերցողին ենք ներկայացնում Էմիլի Կարլիեի «Կոտորածների մեջ» հուշագրության պատմականության, որը հեղինակը վերնագրել է «Ուրֆայի դեպքերը»:



ՈՒՐՖԱՅԻ ԴԵՊՔԵՐԸ

«Այս ջարդերն ամենադաժանն են բոլոր այն կոտորածներից, որ կատարվեցին Հայաստանում:

Սովորական, դասական սկիզբ, մի քանի մահմեդականներ վազվզում են փողոցներում մեղադրելով գյավուրներին թուրքերի վրա հարձակվելու համար: Զորագունդը, դուրս գալով զորանոցից, արդեն հասել և տարօրինակ շարժումներ է անում կարծես զինավարժության հրապարակում լինի: Հայերին քիչ-քիչ վճռում են ապակեմետրոն թաղամասերից, նրանց հավաքում են, համախմբում քաղաքի կենտրոնում, որտեղ ջարդն ավելի կհեշտանար:

Այդ ժամանակ էլ սկսվեց ջարդը՝ մարմինների մասնատումը, ժանտաղեն պղծումները: Հրապարակում պատառոտված հագուստներով ջահել աղջիկների բազմությունը մասմաս վաճառվեց քրդերին:

Հաջորդ օրն այդ դժբախտներից 3000 կանայք պատսպարվեցին մայր տաճարում, դռները փակեցին: Սարդասպանները կացնի հարվածներով ջարդում են դռները, մտնում ներս, երեխաներին, աղջիկներին իրենց մայրերի գրկում սպանում: Շուտով հոգնելով այդ ամենից՝ այնպես արյունոտված, որ այլևս անճանաչելի էին դարձել (նրանց մեջ կային գազան կանայք՝ ավելի դաժան, քան տղամարդիկ), նրանց մտքով մի գարհուրելի բան անցավ՝ ավելի ակտիվացնել... Նրանք վազեցին նավթ ու ռոմեյլ: Սարսափելի՝ ճակատագիր, 50 արկղ նավթ կար եկեղեցու բակում: Նրանք մինչև հատակը դատարկեցին դրանք: 3000 դժբախտ կանայք այրվում էին դանդաղ, մինչդեռ խորանի վրա մազլաճ մոլլաները, ձեռքերը բարձրացրած, շնորհակալություն էին հայտնում և օրհնում Աստծուն...

Երբ արքեպիսկոպոսը կտուրի վրայից, որտեղ նա թաքնվել էր, տեսավ բոցերի բարձրանալը, լսեց զոհերի սրտակեղեք ճիչերը, գրեց նահանգապետին. «Քանի որ դու կործանեցիր իմ ժողովրդին, քանի որ ոչ ոք չկա երկրի վրա, որ կամենա նրան պաշտպանել, ես գնում եմ միանալու իմ զոհերին՝ Տիրոջ գրկում»: Եվ կտրեց իր երակները...

12000 զոհ եղավ...

Հրեաներն զբաղված էին դիակները թաղելով: Օրեր շարունակ նրանց կարելի էր տեսնել պիղծ կենդանիների նման այդ երկաթաձգված մարմինները քարշ տալիս:

Մեր մոլորակի կլիման ձևավորվում է Արեգակից եկող էներգիայի հաշվին: Այդ էներգիայի մոտ 30%-ը դեռևս Երկիր չհասած անդրադառնում է տիեզերական տարածություն, իսկ մնացածը անցնում է մթնոլորտի միջով և տաքացնում Երկրի մակերևույթը: Արեգակից եկող էներգիայի հոսքը և դրա անդրադարձը մշտապես իրար հավասարակշռում են: Սակայն այդ վիճակը կարող է փոփոխվել մոլորակային չափանիշներով: Դա կարող է կատարվել Արեգակի շուրջ Երկրի պտտման էլիպսաձև ուղեծրի հետևանքով: Ջերմության որոշակի քանակ Երկիրն ստանում է նաև իր ընդերքից, որն արտադրվում է մոլորակի կորիզում միջուկային ռեակցիաների հետևանքով: Այն էներգիան, որը Երկիրն ստանում է տիեզերքից ճառագայթների և տիեզերական մասնիկների միջոցով, վերջին հաշվով վերածվում է ջերմության, և դրա մի մասը կրկին անդրադառնում է: Երկրից տիեզերական տարածություն էներգիայի անդրադարձման՝ ալբեդոյի փոփոխությունների հետևանքով ձևավորվում են կլիմայական կատակլիզմները:

ՄԵՐ ՄՈԼՈՐԱԿԻ ՋԵՐՄԱՅՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԱՋԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՐԳԵՐԻ ՎՐԱ

Երկրի պատմության ընթացքում ալբեդոյի փոփոխությունների բազմաթիվ դեպքեր են դիտվել, որոնք կապված են մոլորակի կեղևի անհավասարաչափ տեկտոնական ակտիվության հետ: Ցամաքի և օվկիանոսի մակերեսների փոփոխությունների հետևանքով տեղաշարժվել են օվկիանոսային հոսանքների ուղղությունները, որոնց օգնությամբ ցամաքն ստացել է իր խոնավությունը: Երկրի բևեռներ ընթացող հոսանքների հետևանքով առաջացել են քաղցրահամ ջրերի հսկայական սառցադաշտեր: Դրա հետ միասին ցամաքում գոյացել են մեծ մակերեսներ գրավող անապատներ ու ավազուտներ: Երկիրն սկսել է ավելի քիչ էներգիա ստանալ, որը հանգեցրել է կլիմայի խորը փոփոխությունների:

Կլիմայի ձևավորման համար կարևոր են ոչ միայն ցամաքի և օվկիանոսի վերին շերտերի միջին ջերմաստիճանները, այլև ջրի գոլորշիացման ինտենսիվությունը, ցիկլոնների հզորությունն ու ուղղությունը, հակացիկլոնների կայունությունն ու օդային զանգվածների տեղաշարժը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մթնոլորտ-ջրոլորտում ջերմաստիճանի 2°C-ով բարձրացումը կարող է զգալիորեն փոխել Երկրի մակերեսի միջին ջերմաստիճանը և պատճառ դառնալ հսկայական տարածությունների վրա աղետալի երաշտների կամ ջրհեղեղների առաջացման, որոնք կործանարար կլիման ոչ միայն կենդանի բնության, այլև մարդու տնտեսական գործունեության համար: Երկրի պատմության մեջ կլիմայական նման կատակլիզմներ եղել են և կլինեն:

Երկրի կենսոլորտը ինքնակարգավորվող համակարգ է, որի շնորհիվ մոլորակի ջերմաստիճանը անսահման չի բարձրանում, սակայն տեսականորեն դա հնարավոր է:

Ի՞նչ ենթադրություն ունի մարդու թերմոգեն գործունեությունը Երկրի կլիմայի ձևավորման վրա: Մեր մոլորակի վրա մարդու կողմից էներգիայի բոլոր տեսակների օգտագործումը վերջին հաշվով հանգեցնում է ջերմության առաջացման: Դրա հետևանքով բնության մեջ մարդածին ջերմության բաժինը գնալով աճում է: Սակայն դժվար է պատկերացնել, որ ջերմության այդ քանակը էական կարող է լինել Երկրի ջերմային հաշվեկշռի մեջ, քանի որ այն կազմում է դրա ընդամենը մեկ

տոկոսի մասեր: Սակայն մթնոլորտում ածխաթթու գազի ավելացումը, որն ունի մարդածին ծագում, էական կարող է լինել ջերմային հաշվեկշռի տեղաշարժերի մեջ: Վերջին տասնամյակների ընթացքում մթնոլորտում CO₂-ի պարունակությունը աճել է 12-15 %-ով: CO₂-ը չի խոչընդոտում դեպի Երկիր տեսանելի ճառագայթների ներթափանցումը: Դրա հետևանքով Արեգակի ճառագայթները տաքացնում են Երկրի մակերեսը, սակայն ջերմության ավելցուկը չի անդրադառնում CO₂-ի շերտի պատճառով, և ձևավորվում է ջերմոցային էֆեկտ: Երկրի ջերմոցային էֆեկտը 60 %-ով պայմանավորված է CO₂-ի արտանետումներով: Յուրաքանչյուր տարի բնական ճանապարհով մթնոլորտի, օվկիանոսի և բույսերի միջև տեղի է ունենում միլիարդավոր տոննա ածխածնի երկօքսիդի փոխանակություն: Այդ գազի պարունակության և բնական համակարգերի միջև փոխանակությունը խիստ հավասարակշռված է: Նախարարություններական ժամանակաշրջանի 10 հազ. տարիների ընթացքում ածխածնի երկօքսիդի պարունակությունը մթնոլորտում ունեցել է

տասը տոկոսից պակաս տատանում: Սակայն 1800թ. սկսած՝ 200 տարիների ընթացքում, դրա քանակն ավելացել է ավելի քան 30 տոկոսով: Պետք է նկատի ունենալ, որ մարդու տնտեսական գործունեության մեջ CO₂ արտազատող վառելիքի տեսակները՝ նավթը, քարածուխը, գազերը դեռևս երկար կօգտագործվեն, հետևաբար մթնոլորտում այդ գազի քանակը գնալով կաճի, և մոտ ապագայում ջերմոցային էֆեկտը էլ ավելի կխորանա:

Կլիմայի վրա երկրորդ մարդածին ներգործողները աերոզոլներն են, որոնք ջերմոցային գազեր չեն մանրադիտակային մասնիկներ են և առաջանում են ծծմբի երկօքսիդից ու այլ նյութերից, արտանետվում են ջերմակայաններից, ծխից, թափոնների այրումից:

Ջերմոցային էֆեկտի ձևավորման մեջ իր բաժինն ունի նաև մթաքնը, որը մթնոլորտ է թափանցում բնական աղբյուրներից, ճահիճներից, ջրամբարներից, ինչպես նաև մթաքնային խմորումների հետևանքով: Իսկ արտանետված մթաքնը մթնոլորտում կարող է պահպանվել մինչև 12 տարի:

Ի՞նչ հնարավոր հետևանքներ կունենա մեր մոլորակի ջերմացումը: Քանի որ Երկրի ջերմաստիճանի բարձրացումը կապված է տարբեր գործոնների հետ, հետևաբար միանշանակ պատասխանել այդ հարցին հնարավոր չէ: Սակայն մի բան տեսանելի է, որ CO₂-ի արտանետումների այսօրվա տեսլական պայմաններում մինչև 30-ական թվականները դրա պարունակությունը մթնոլորտում կկրկնապատկվի, որը կհանգեցնի Երկրի տարեկան ջերմաստիճանի 3-5-ով բարձրացմանը: Դժվար է ճշտորեն կանխատեսել, թե դրա հետևանքով համաշխարհային օվկիանոսում ինչպիսի հոսանքներ կձևավորվեն և ինչ ուղղություն կունենան, սակայն համոզված կարելի է ասել, որ կհալվեն բևեռներում կուտակված սառցադաշտերը: Դա կհանգեցնի օվկիանոսի մակարդակի մի քանի մետրով բարձրացմանը, որի հետևանքով ջրածածկ կլինեն մերձծովյան հսկայական տարածություններ, որի վրա այժմ բնակվում է մարդկության գրեթե 1/4 մասը:

Արմեն ՄԻՄՈՆՅԱՆ
Կենսաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր



«Գիտություն» թերթի հարցերին պատասխանում է Հայաստանի Ազգային գրադարանի տնօրեն Տիգրան ԶԱՐԳԱՐՅԱՆԸ

Գրքերի թվայնացումը՝ ժամանակի հրամայական

- Պարոն Ջարգարյան, ո՞րն էր գրքերի թվայնացման անհրաժեշտությունը:

- Գիտք, թվայնացման ենթակա են ոչ միայն գրքերը, այլև պարբերական մամուլի ժառանգությունը: Որոշեցինք թվայնացնել, քանի որ թվային տարբերակը թղթային տարբերակի նկատմամբ մի շարք առավելություններ ունի: Առաջինը՝ թվային տարբերակը հասանելի է աշխարհի ցանկացած վայրից. հեռավոր գյուղերում, որտեղ համացանց կա ու համակարգիչ, կարող են մտնել ու կարդալ: Օրինակ, ՀՀ ԳԱԱ-ում պահվող գրականությունը որքան քիչ է, և որքան շատ հայեր՝ աշխարհում ցրված, կցանկանան կարդալ:

Բացի դա, սա ապահովագրված պատճեն է. գիրքը կարող է պատռվել, գրադարանում չլինել կամ պարզապես զբաղված լինել, մինչդեռ թվային տարբերակը լուծում է այդ բոլոր խնդիրները: Մարդը պարտավոր չէ դուրս գալ տնից կամ աշխատավայրից՝ գրադարան գնալու համար, կարող է հենց տեղում օգտվել թվային տարբերակից և կարդալ իր ցանկացած գիրքը կամ հոդվածը՝ երբ էլ կամենա:

- Տեղեկատվության ի՞նչ ծավալ է նախատեսվում թվայնացնել: Եվ արդյո՞ք միայն հայ գրականությունն է ձեր թիրախը:

- Համար մեկ թիրախը հայ գրականությունն է, որովհետև ենթադրում ենք, որ անգլերենն անգլիացիներն են անում, իսպաներենը՝ իսպանացիները կանեն, ռուսերենը՝ ռուսները կանեն: Դա մեր խնդիրը չէ այս պահին: Մեզ համար այս պահին կարևոր են հայ գրքերը, որովհետև հայ ժողովուրդը ահռելի գրական ժառանգություն ունի ողջ աշխարհում, շատ ազգեր պարզապես նախաձեռնեն: Եվ, դժբախտաբար, հաճախ այն տեր չունի:

Գրադարաններում կան հնատիպ գրքեր, որոնք թրջվում են, խոնավությունից փչանում, կորչում, վառվում: Իսկ մենք աշխարհով մեկ սփռված ունենք ահռելի քանակությամբ գրականություն: Միայն Հնդկաստանում որքա՞ն ունենք: Դրանցից շատերը իրողեիվ են, կորել: Պետք է դրանց տեր կանգնել: Եվ ինչքան ավելի հին գրքերից սկսենք, այնքան լավ: Հիմա Ազգային գրադարանի հետ այս գործընթացն իրականացնենք, հետո կմիանանք էջմիածնի գրադարանին, Մատենադարանին, և գործընթացը կծավալվի աշխարհով մեկ:

Մյուս թիրախը մեր գիտական ժառանգությունն է: Դրանք տարբեր հրատարակչությունների ամսագրեր ու գրքեր են: Մենք հիմա թվայնացնում ենք ԳԱԱ ամսագրերը՝ 1940 թ-ից սկսած: Ամսագրեր կան, որ ավարտել ենք, օրինակ՝ մեխանիկան, տեխնիկական գիտությունների ամսագրերը: Կան ամսագրեր, որ ընթացքում են. դա ահռելի գործ է: Հիմա մեր աշխատանք ենք սկսում՝ թվայնացնում ենք մեր ակադեմիայի մատենաշարային գրականությունը, օրինակ, եզակի հրատարակչությունը՝ «Օտար աղբյուրները Հայաստանի մասին», որի վրա շատ լուրջ գիտնականներ են աշխատել:

Աշխատանք է տարվում նաև մեր պարբերականների բաց համարների վերականգնման ուղղությամբ: Օրինակ, պարբերականի համարների հետ անբարեխիղճ են վարվել ընթերցողները, պատռել են, վնասել, և մենք փորձելու ենք Ազգային գրադարանի և ԳԱԱ հիմնարար գրադարանի օրինակները միացնել իրար, մի

եջ՝ մեկից, մի էջ՝ մյուսից. գուցե հաջողվի վերականգնել: Ինչպես նաև զբաղվում ենք Վրաստանում լույս տեսած հայկական պարբերականների թվայնացմամբ: Սփյուռքում էլ կա շատ հարուստ մամուլ: Նախ սրանք բոլորին հասանելի կլինեն, հետո՝ կվերականգնենք բաց համարները: Եվ, ի վերջո, թվայինը տեղ չի գրավում և ժամանակի ընթացքում չի հնանում: Երիտասարդների պահանջն է, ժամանակի պահանջն է:

- Ովքե՞ր են զբաղվում թվայնացման գործով:

- Գործընթացում ընդգրկված են ԳԱԱ հիմնարար գրադարանի բոլոր աշխատակիցները, ինչպես նաև աշխատակիցներ Ազգային գրադարանից: Հիմնական հովանավորը պետությունն է, որն ապահովում է աշխատավարձով և թվայնացման գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններով: Մեզ նաև հովանավորներ են պետք՝ անհրաժեշտ տեխնիկա ձեռք բերելու համար, որովհետև սարքերը շատ քանկ են: Օրինակ, մի քանի ամիս առաջ Ավստրիայից ստացանք մեկ հատ եզակի նկարահանող սարք, որը շատ արագ է աշխատում, և դրա արժեքը զեղչերով և առանց ԱՄՀ-ի կազմում է 53 000 եվրո: Բրիտանական գրադարանից դրամաշնորհ ստացանք և ևս մեկ եզակի նկարահանող սարք ձեռք բերեցինք, որն արժե մոտ 70 000 ԱՄՆ դոլար. այն կարող է շատ մեծ ֆորմատի թղթեր նկարահանել, օրինակ՝ մեծ քարտեզներ, ատլասներ: Չենք բողոքում, հովանավորներ կան, քանի որ բոլորն էլ գիտակցում են թվայնացման անհրաժեշտությունը: Եվ, կարծես թե՝ տեխնիկական զինվածությամբ, և թե՝ մասնագետների խնդիր չունենք:

- Պարոն Ջարգարյան, որքա՞ն ժամանակ է, որ սկսել է գրքերի թվայնացման գործընթացը:

- Թվայնացման գործընթացը սկսել ենք 2008 թ. և այն անվերջ գործընթաց է: Մեր ամբողջ գրական ժառանգությունը թվայնացնելը մեկ կամ երկու կազմակերպության գործ չէ: Մենք օգոստոսին կունենանք գրադարանավարների երկրորդ համահայկական գիտաժողովը, որի ժամանակ կքննարկենք հայ հնատիպ գրքի վիճակը, հայ պարբերական մամուլի վիճակը և գրքափոխանակության հարցերը:

Սփյուռքում մեծ ժառանգություն ունենք՝ Վենետիկում, Երուսաղեմում, Հնդկաստանում: Հայերը սփռված են եղել աշխարհով մեկ, և հիմնական մշակութային արժեքները Հայաստանից դուրս են ստեղծվել: Մենք պետք է դրանք իսկապես պահպանենք: Կառավարությունը հաստատեց հայագիտության զարգացման հայեցակարգը, որի աշխատանքների բոլոր կետերով կարմիր թելով անցնում է թվայնացումը: Մեր աշխատանքն արդարացնում է իրեն, ես հետևում եմ: Մենք արդեն մեծ թվով ընթերցողներ ունենք: Սակայն դեռ այնքա՞ն գործ կա անելու: Այն, ինչ մենք արել ենք, պարզապես կաթիլ է օվկիանոսում 10 տարի, 20 տարի, 50 տարի, անվերջ է, պետք է բոլոր հայագիտական հաստատությունները միասին աշխատեն այս ուղղությամբ:

- Շնորհակալություն, պարոն Ջարգարյան, հետաքրքիր և սպառիչ հարցազրույցի համար:

Հարցազրույցը վարեց՝
ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

Անցյալ տարվա վերջերին Հայկում արաբերեն լեզվով լույս տեսավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի «Արաբական երկրների պատմություն (VII-2005 թթ.)» քառահատոր հետազոտությունը, որը հայերենից արաբերեն է թարգմանել դոկտոր Ալեքսանդր Քեշիշյանը: Ստորև ներկայացնում ենք եզրապատգի հայտնի պատմաբան, «Հայերը եզրապատգում տասնիններորդ դարում» և «Հայկական հարցը օսմանյան պետությունում. 1878-1923 թթ.» արժեքավոր գրքերի հեղինակ, պրոֆեսոր Ռիֆատ ալ-Իմամի գնահատականի խոսքը հայ արաբագետի, քառահատոր կոթողային աշխատության մասին

բական, հայկական, անգլիական, ռուսական, ֆրանսիական և այլ սկզբնաղբյուրների վրա գրված բազմապլանային աշխատություն է, որը տալիս է արաբների անցած ուղու բազմադարյան հավաստի պատմությունը և բացահայտում արաբական քաղաքակրթության ծնավորման օրինաչափությունները: Աշխատությունում մանրամասն լուսաբանվել են Իսլամի որպես համաշխարհային նոր կրոնի, առաջացման նախադրյալները, նրա դավանաբանական հիմնարար նորմերը և հոսանքները, մուսուլմանների սրբազան գրքի՝ ալ-Կորանի սուրահների վերլու-



մահվան ճիրաններից: Այդ սրտառուչ տողերը կարդալուց հետո անհնար է չհամաձայնվել հեղինակի այն տեսակետի հետ, որ եթե չլինեք արաբների մարդասիրական դիրքորոշումը և օգնությունը հայերին 1915 թ. ցեղասպանության ժամանակ, ապա չէր լինի նաև ժամանակակից հայ սփյուռքը:

Քառահատորյակի վերջին երկու հատորները հատկացված են արաբական երկրների 1918-2005 թթ. պատմությանը, երբ արաբներին հաջողվեց նվաճել քաղաքական անկախություն, որի արդյունքում կազմավորվեցին արաբական մոտ երկուսուսույնի սուվերեն պետություններ: Արաբական բոլոր պետությունների անկախության և սուվերենության հաստատման այդ գործընթացի լուսաբանությունը գիտական առումով նորություն է, մանավանդ այդ պատմական երևույթի օրինաչափությունների բացահայտումը, որի վերաբերյալ հեղինակը դրսևորել է յուրահատուկ գիտական մոտեցում:

Քառահատորյակի ամենաարժեքավոր մասերից մեկը պետք է համարել նրա այն հատվածները, որոնք նվիրված են արաբական երկրներում հայ համայնքների ծնավորմանը, հայերի կարևոր, երբեմն բացառիկ դերակատարմանը արաբական երկրների պետական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում: Այդպիսին է եղել հայերի դերը Ֆաթիմյան եզրապատգում X-XI դարերում, երբ նրանց ձեռքում էր կենտրոնացված ամբողջ պետական, քաղաքական և ռազմական իշխանությունը: Հայերը նման արտակարգ դերակատարում են ունեցել նաև XIX դարում, Մուհամմադ Ալիի կառավարման շրջանում, որը մեծագույն հարգանքով էր վերաբերվում հայերին, վստահում նրանց և նշանակում կարևոր պաշտոնների, այդ թվում՝ արտաքին գործերի, կրթության, երկաթուղիների նախարարների պաշտոններում: Իսկ երբ եզրապատգում պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց վարչապետի պաշտոն, ապա արաբական այդ ամենաազդեցիկ պետությունում առաջին վարչապետ նշանակվեց Նուբար Նուբարյանը, որը մեծ հեղինակություն էր վայելում ոչ միայն արաբական աշխարհում, այլև մի շարք եվրոպական երկրներում: Հայերը, ինչպես ցույց է տված քննարկվող աշխատության մեջ, նման բարձր դիրքեր են ունեցել նաև Լիբանանում: Երբ 1861 թ. օսմանյան իշխանությունները արևմտյան պետությունների ճնշման ներքո հարկադրված էին ինքնավարություն հաստատել Լեռնալիբանանում, և հաստատվեց մութասսառիֆ փոխարքա նշանակվեց հայազգի Արթին Կառապետ Դաուդյանը: Ի դեպ, վերջին փոխարքան նույնպես հայ էր՝ Հովհաննես Կուրումջյանը:

Վերջապես աշխատության ամենաե-

կան բաժիններից է հայ-արաբական միջպետական հարաբերությունների լուսաբանումը պատմական տարբեր փուլերում, մասնավորապես, երբ քաղաքական ասպարեզում հայտնվեցին արաբական անկախ պետությունները և իր անկախությունը վերագտած Հայաստանի Հանրապետությունը: Մինչև դոկտոր Նիկոլայ Հովհաննիսյանի սույն աշխատությունը դեռևս ոչ մի հեղինակ այդ կարևորագույն խնդրին չէր անդրադարձել նման ընդգրկումով և խորությամբ:

Հայ գիտնականի այս կոթողային քառահատորյակը տիտանական աշխատանքի արդյունք է, որը զարմացնում է իր խորությամբ և հիմնախնդիրների ընդգրկումով: Նիկոլայ Հովհաննիսյանի Արաբական երկրների պատմության արաբերեն լեզվով այս չորս հատորները ծանրակշիռ ներդրում են համաշխարհային արաբագիտության բնագավառում, որի արդյունքում արևելագիտական այդ կարևոր ուղությունը բարձրացավ նոր, ավելի բարձր մակարդակի: Հայերն այս ասպարեզում նույնպես առաջինը եղան, և ոչ միայն այլ ժողովուրդներ, անգամ արաբները չունեն իրենց պատմությանը նվիրված նման համապարփակ և համակարգված կոթողային ուսումնասիրություն:

Ավանդին կցանկանայի ավելացնել նաև պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի գրելառժին առանձնահատուկ երեք բնորոշ գծեր: Ուաջին, ակադեմիական գրելառժը, որն արտահայտվել է ստեղծագործական, հնարամիտ գաղափարների և նորարարական մոտեցման, աղբյուրների հավաստիության, ուսումնասիրության իղելական կառուցվածքի և արաբական տեքստերի խորիմաստ հասկացության մեջ: Երկրորդ՝ գիտական տեղեկատվությունը ընթերցողներին հմուտ կերպով հասցնելու ձևը և օգնությունը ընթերցողին՝ իմանալու արաբ մուսուլմանների հատուկ մոտեցումը հայ քրիստոնյաների նկատմամբ: Երրորդ՝ քաղաքական մոտեցումները, մասնավորապես, արաբների մարդասիրական դիրքորոշումը հայերի նկատմամբ հայոց ցեղասպանության ժամանակ, հայերի և արաբների միջև փոխադարձ հարգանքի առկայությունը, արաբական երկրների հայ համայնքների ակտիվ դերը արաբական երկրների պետական գործերում, քաղաքականության, տնտեսության, մշակույթի, արվեստի և այլ բնագավառներում, հայ-արաբական միջպետական հարաբերությունների նշանակությունը և, ամենակարևորը, արաբների որպես մուսուլման ահաբեկիչների կերպարի վերացումը:

Շնորհավորելով արդի տաղանդավոր հայ արաբագետին նրա գիտական իսկապես սխրանքի՝ արաբերեն լեզվով չորսհատորյակի հրատարակման կապակցությամբ, վստահ ենք, որ նա մեկ անգամ չէ, որ մեզ կուրախացնի իր ինքնատիպ աշխատություններով:

Դոկտոր Ռիֆատ ալ-Իմամ եզրապատգի Ալեքսանդրիայի համալսարանի Դամանհուրի մասնաճյուղի պրոֆեսոր, Կահիրեի համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի համակարգող, «Համա» ամսագրի (Կահիրե) գլխավոր խմբագիր

ԳԻՏԱԿԱՆ ՄԽՐԱՆՔ

ՊՐԻՖԵՍՈՐ ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՐԱԲԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ՀՐԱՏԱՐԱՎՈՐ «ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԲԱՌԱՀԱՏՈՐ ԺՈՒՆԴԱՄԵՆՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ես ուրախ եմ, որ հնարավորություն ունեմ գնահատականի խոսք ասել արաբագիտության բնագավառում հռչակավոր պատմաբան, հայ արաբագիտական դպրոցի հիմնադիր Նիկոլայ Հովհաննիսյանի գիտական ծանրակշիռ վաստակի մասին: Նա հայտնի է աշխարհի արևելագետների և արաբագետների շրջանում իր ստեղծագործ գաղափարներով: Ես որպես արաբագետ, կարող եմ հավաստել, որ պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի, տաղանդավոր գիտնականի աշխատությունները, որոնք հրատարակվել են բացի Երևանից նաև Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում, Անգլիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Կանադայում, Իրանում, Իտալիայում, Հունգարիայում, Թուրքիայում և այլ երկրներում, նոր մակարդակի բարձրացրեցին արդի արաբագիտությունը և խթանեցին արաբագիտական ուսումնասիրություններն աշխարհի տարբեր համալսարաններում և գիտական կենտրոններում: Այդ հրապարակումները նրան բերել են միջազգային մեծ ճանաչում:

Դոկտոր Ն.Հովհաննիսյանի «Արաբական երկրների պատմությունը (VII դարից - 2005թ.)» չորս հատորից կազմված հիմնարար, բացառիկ կարևորություն ունեցող և իր նախադեպ չունեցող մենագրությունն իր բովանդակությամբ եզակի ուսումնասիրություն է: Նրա ժամանակագրական շրջանակները շատ լայն են և ընդգրկում են արաբների պատմությունը VII դարից՝ Իսլամի ծագումից և Արաբական խալիֆայության կազմավորումից մինչև մեր օրերը՝ ընդգրկելով արաբական 19 երկրների՝ Ալժիրի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Բահրեյնի, Եգիպտոսի, Եմենի, Թունիսի, Իրաքի, Լիբանանի, Լիբիայի, քառարի, Հորդանանի, Մարոկկոյի, Մավրիտանիայի, Պաղեստինի, Սաուդյան Արաբիայի, Սիրիայի, Սուդանի, Օմանի և Քուվեյթի տարբեր դարաշրջանների պատմությունը: Դա արա-

ծությունը, Արաբական խալիֆայության վերածումը ընդարձակ կայսրության, որն ընդգրկում էր մի հսկայական տարածք՝ Հնդկական օվկիանոսից մինչև Ատլանտյան օվկիանոս, արաբա-իսլամական քաղաքակրթության ծնավորումը և նրա ազդեցությունը համաշխարհային մշակույթի վրա: Աշխատության կարևոր բաժիններից է 1516 թ. օսմանյան տիրապետության հաստատումը Արաբական երկրների վրա և չորս դար տևած օսմանյան բարբարոսական լծի ավերիչ հետևանքների նորոգի լուսաբանությունը: Այդ առումով վերին աստիճանի արժեքավոր է հայ գիտնականի դիրտողությունն առ այն, որ երբեմնի զարգացած արաբական աշխարհի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային հետամնացության պատճառները պետք է փնտրել օսմանյան դաժան, բարբարոսական տիրապետության և առկա քաղաքական, ռասայական, սոցիալ-տնտեսական հարաբերությունների մեջ: Աշխատությունը պարունակում է առանձին բաժիններ՝ նվիրված հայոց ցեղասպանության պատմաոգների բացահայտմանը, երիտթուրքերի Օսմանյան կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների բռնի թուրքացման քաղաքականությանը և օսմանյան պետությունը էթնիկապես մաքուր թուրքական պետության վերածելու նրանց ձգտմանը: Այդ հարցերում հայ գիտնականի հայեցակարգային մոտեցումները միանգամայն հիմնավորված են և համոզիչ ու ընդունված մասնագետների կողմից: Հեղինակը մանրամասնորեն ներկայացրել է արաբների մարդասիրական դիրքորոշումը հայ տարագիրների նկատմամբ: Ուղղակի գերում են աշխատության այն էջերը, որոտեղ ցույց է տրված, թե ինչպես արաբները, հասարակ ժողովուրդը և պաշտոնյաները, շատ հաճախ իրենց կյանքը վտանգելով, օգնում էին իրենց գյուղերով և քաղաքներով անցնող հայ գաղթականների քարավաններին, փրկում կանանց և մանուկներին

Հայաստանի 12-րդ մայրաքաղաքը հենց 2012 թվականին խորհրդանշորեն ստանձնեց աշխարհի գրքի այն 12 քաղաքներից մեկը, որոնց վստահվել է «Գրքի համաշխարհային մայրաքաղաք» հրչակվելու պատիվն ու պատասխանատվությունը:

Երևանն այս հեղինակավոր տիտղոսը կրելու իրավունքին արժանացել է հայատառ տպագրության 500-ամյա ժառանգության կապակցությամբ, որի մեկնարկը տրվեց Վենետիկում՝ հայ գրատպության պատմության ծննդավայրում:

Ողջ տարվա ընթացքում Հայաստանում և նրա սահմաններից դուրս նախատեսվում է գրավոր մշակույթի արժևորմանը նպաստող միջոցառումներ, իսկ ապրիլի 20-23-ը Երևանում տեղի ունեցած միջոցառումները այս ամենի բարձրակետն էր, որի վառ ապացույցը



Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք

«Երաժշտական ողջույն հայ գրատպության բնօրրան Իտալիայից» խորագրով աշխարհահռչակ տենոր Անդրեա Բոչելլիի մենահամերգն էր Ազատության հրապարակում՝ ՀՀԽՆ-ի, պետական կամերային և «Հովիթ» երգչախմբի մասնակցությամբ:

Տոնի կապակցությամբ բացվեց Դավիթ

Երևանցու «Վարջ հավերժության» քանդակը, որը խորհրդանշում է «Արջ ճառընտիր» մագաղաթյա ամենամեծ ձեռագիր մատյանը՝ գրված 1200-1202 թթ.:

Հատկանշական էր տոնի կապակցությամբ բացված «ArmbookExpo» և «Գրքի հավերժություն...» խորագրով ցուցահանդեսները, ուր առաջին անգամ միասնական ցուցադրությամբ ներկայացվեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածին բանգարանի, Հայաստանի պատմության բանգարա-

նի, Մատենադարանի, Ազգային գրադարանի հավաքածուներից ընտրված հնագիտական, վիճակագրական և վավերագիր ցուցանմուշները: Նմանատիպ գեղեցիկ միջոցառումների կողքին, իր յուրատիպությամբ հրաշալի էր Բորխեսին նվիրված լուսանկարչական ցուցահանդեսի բացումը՝ Բորխեսի տիկնոջ՝ Մարիա Կոդամայի և Բուենոս Այրեսի մշակույթի նախարար Էռնան Լոմբարդիի կողմից :

Այսպիսով հայոց 12-րդ մայրաքաղաք Երևանը 2012 թ. գրքի համաշխարհային 12-րդ արժանի տիտղոսակիր մայրաքաղաքն է, որը նշանավորվեց բազում անակնկալ միջոցառումներով և անսահման ու անմոռանալի ակնբարձրերով լի իրադարձություններով:

Դավիթ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մարդկությունը ապրում է իր փոքրիկ «պղպջակի» մեջ

Այն, որ մենք գոյություն ունենք, կանք՝ արդեն հայտնի է 240 լույսային տարի տրամագծով տարածության մեջ

Մարդկությունը շատ համեստ տեղ է զբաղեցնում ոչ միայն ողջ տիեզերքում, այլ նաև իր հարազատ Կաթնձիկ համաստեղությունում: Այդ մեկ տեղը վերջերս մեզ ցույց տվեց աստղագետ Ադամ Գրոսսմանը՝ գնդաստիկ զվիսիկ չափ: Այդ գնդիկի տրամագիծը 240 լույսային տարի է, որն իսկապես ավագահատիկ է, որը 100 հազար լույսային տարվա տրամագծով ամբողջ համաստեղության համեմատությամբ պարզապես ավագահատիկ է:

Այդ կետը կամ ինչպես Գրոսսմանն է ձևակերպում «Մարդկության պղպջակը», իրենից ներկայացնում է մի գունդ, որի սահմանը առաջին ռադիոհաղորդումն է:

Ռադիոն հայտնագործվեց 1885 թվականին: Եվ ահա այդ օրվանից արհեստական էլեկտրամագնիսական ալիքների ազդանշանները լույսի արագությամբ թռչում են դեպի տիեզերքի բոլոր կողմերը: Նույն արագությամբ էլ լայնանում է այդ ազդանշաններով լցված գունդը: Ազդանշանները հասնում են այնպիսի տարածությունների, որտեղ ինչ-որ մեկը կարող է դրանք լսել: Կամ գոնե զվիսի ընկնել, որ լսում է ինչ-որ արհեստական մի բան: Եթե, իհարկե, գնդի ներսի աշխարհներում կա այնպիսի հայտնագործություն, ինչպիսին է ռադիոն: Ել չենք խոսում ռադիոդիտակների մասին:

Եվ քանի որ «Մարդկության պղպջակը» ունի ընդարձակվել է 200 լույսային տարուց մի քիչ ավելի, ապա դրանից հեռու գտնվող աշխարհներում հազիվ թե գիտեն մեր բանական գոյության մասին:

Կաթնձիկ համաստեղության ֆոնին երևացող այս աննշան կետը ակնառու ցույց է տալիս, թե որքան աննշան տարածք է զբաղեցնում «Մարդկային պղպջակը», որի շրջանակներում մենք ինչ-որ կերպ հայտարարել ենք մեր գոյության մասին:



յության մասին:

Մեր «հայտին» դեռ ոչ մեկը չի արձագանքել: Համեմայն դեպս գիտնականները դեռևս հուսադրող ոչինչ չեն որսացել՝ ոչ այլնոլորակային ռադիոհաղորդում, ոչ էլ արհեստական ծագում ունեցող ազդանշան: Գուցե թե մեր «պղպջակում» համապատասխան այլնոլորակայիններ չկան: Ինքն իրեն տալով այս հարցը, Ադամ Գրոսսմանը հայտարարել է, թե իրեն շատ միայնակ է զգում:

Արտերկրային քաղաքակրթություններից ազդանշանների որոնման ծրագրի ղեկավար Սեթ Շոտակը գտնում է, որ թաքնվելն արդեն ժամանակավրեպ է: Չէ՞ որ «Մարդկության պղպջակը», Կաթնձիկի այդ աննշան բշտիկը, ըստ էության, այնքան էլ փոքր չէ: Երկրից ուղարկված ռադիոազդանշանները հասել են ավելի քան 6 աստղային համակարգեր: Եվ ա-

մեն օր երկրի ռադիոազդանշանները հասնում են առնվազն մի նոր աստղային համակարգ:

Եվ հազիվ թե ամենազարգացած այլնոլորակայինները լսում են երկրային ռադիոն կամ հեռուստատեսությունը: Տարածության մեջ այդ ալիքները աղճատվում են: Սակայն նրանք կարող են այդ ազդանշաններում ճանաչել նրանց արհեստականության աղբյուրը և որոշել նրա տեղը: Շոտակի կարծիքով մեր տեխնիկայից 100-200 տարով ավելի զարգացած քաղաքակրթություն չի վիճակի է դրան: Այլ խոսքով, մենք արդեն մատնել ենք մեր տեղը և շարունակելու ենք մատնել անգամ «լռելուց» հետո:

Այս տեսակետը կիսում է Ռուսաստանի Ռաշնության գիտությունների ակադեմիայի ռադիոտեխնիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի աշխատակից, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Զայցևը:

Ես չեմ կարծում, թե մարդկությունը պետք է թաքնվի որևէ մեկից: Եթե ենթադրենք, որ գոյություն ունի հզոր քաղաքակրթություն, որը զարգացման մակարդակով զգալիորեն գերազանցում է մեզ, ապա նրանից չես թաքնվի: Ու եթե նրանց տեխնիկան այնքան է զարգացած, որ նրանք կարող են հարձակվել երկրի վրա, ապա պարզ է, որ նրանք վաղուց որսացել են մեր ռադիոյի և արբանյակային հեռուստատեսության ալիքները: Եվ, բնականաբար, նրանք մեր մասին ամեն ինչ գիտեն:

Ու մյուս կողմից, եթե կա արտերկրային քաղաքակրթություն, որը զարգացման մակարդակով համեմատելի է մեզ հետ, ապա կապի մեջ մտնելով նրա հետ, մենք ոչինչ չենք վտանգում: Ոչ մեր և ոչ էլ նրանց տեխնիկան չի վիճակի չի բավական կարճ ժամանակում թռչել մի աստղից մյուսը: Այլ խոսքով, տիեզերքից առաջին մեզ վտանգ չի սպառնում:

Վլադիմիր ԼՍԳՈՎՍԿԻ
«Կ. Մ.»

Կառավարվող անձրև անապատի վրա

Խիստ գաղտնի պահվող նախագծի օգնությամբ, որը ֆինանսավորվել է Միացյալ Արաբական Եմիրությունների պրեզիդենտի կողմից, անցյալ ամառ Աբու-Դաբիի տարածքում 50 անգամ տեղացել է... անձրև:

Գաղտնի, անչափ ոգևորիչ ծրագիրը, որը ֆինանսավորեց Միացյալ Արաբական Եմիրությունների նախագահը, վկայում է այն մասին, որ մարդ արարածը կարող է կառավարել կլիման: Աբու-Դաբիի շրջանը, որ հայտնի է ամառային սաստիկ երաշտներով, շվեյցարացի ճարտարագետների հայտնագործության շնորհիվ 50 անգամ տեղացել է անձրև:

Ընկերության պրեզիդենտ Յելմար Ֆյուրերը հայտարարել է, որ իրենք առկա ամպերը արծաթե քլորիդով փոշիացնելու փոխարեն (այս եղանակը կիրառվում է Հիմաստանում և Իսրայելում), անապատում տեղադրել են մոտ տասը մետր բարձրության հովանոցներ: Այդ հովանոցները ի վիճակի են օդը լիցքավորել էլեկտրականությամբ:

Հովանոցները արտադրում են մեզատիվ իոններ, որոնք ուղղորդվում են դեպի երկինք: Այդ մասնիկները ընդունակ են միացնել փոշու հատիկները, որոնք դառնում են իդեալական միջոց օդում ջուրը կոդենսացնելու համար: Միլիարդավոր մման չնչին կաթիլները կարող են ձևավորել ամպ, որն էլ դառնում է անձրևի աղբյուր:

Սարքը, որ 112 օրվա ընթացքում է գործի դրվել 74 անգամ, անձրև է բերել 50 անգամ: Տեղումների քանակը չի ճշտվել: Սակայն ամեն անգամ, երբ տեղացել է այդ սարքով անձրևը, տեղական օդերևութաբանական ծառայությունները չեն արձանագրել կամ գուշակել ոչ անձրև և ոչ էլ ամպամածություն:

Meteo Systems ընկերությունը գտնում է, որ իր հայտնագործությունը կարող է փոխարինել ծովի ջուրը թորելու (խմելու ջուր) եղած չափազանց քանկ սարքավորումները: Հաշվարկները ցույց են տալիս, որ նոր հայտնագործության տեխնոլոգիայի օգտագործմամբ 100 միլիոն խորանարդ մետր խմելու ջուր ստանալու համար կծախսվի 7 միլիոն եվրո՝ մինչդեռ նախկին տեխնոլոգիայով նույն քանակությամբ խմելու ջուր ստանալու համար ծախսվում է 53 միլիոն եվրո:



ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՄԵԾ ԳԵՂԱՆԿԱՐԶԻ ՄԱՍԻՆ

Արարտ Ագասյան. ՍԻՄՎՈԼԻԶՄ Ի ՏՎՈՐԵՇԵՍՏՎՈՐ ՄԱՐՏԻՐՈՍԱ ՏԱՐՅԱՆ
Երևան: Վոսկան Երևանցի, 2012.

Լույս է տեսել արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարտ Ագասյանի «Սիմվոլիզմը և Մարտիրոս Մարյանի ստեղծագործությունը» պատկերա-

մասնագիտական ու հարակից գրականությունից, ինչպես նաև արխիվային աղբյուրներից: Գրքում հրապարակվում են նոր փաստեր, առաջ քաշվում տեսական նոր դրույթներ, որոնք էական են Մարյանի վաղ ստեղծագործության ճիշտ ըմբռնման և գնահատման համար:

Գրքի մեկ այլ արժանիքն այն է, որ Մարյանի արվեստը դիտարկվում է ոչ թե մեկուսացված, ինքնին, այլ պատմամշակութային լայն ֆոնի վրա, ժամանակի գաղափարազեղադիտական ծրագրերի և գեղարվեստական գործընթացների համատեքստում: Մարյանի կտավները և գրաֆիկական թերթերը համեմատվում են ռուս ու եվրոպացի արվեստագետների գործերի հետ, բերվում են նշանավոր արվեստաբանների և քննադատների, մշակույթի գործիչների (Մ. Վոլոշին, Ա. Բենուա, Ն. Պունին, Ա. Ֆյոդորով-Դավիդով, Ռ. Դրամբյան, Դ. Սարաբյանով և ուրիշներ) կարծիքները Մարյանի մասին:

Խոսելով ստեղծագործական ազդեցությունների մասին, որոնք առկա են Մարյանի վաղ շրջանի աշխատանքներում, հետազոտողը ցուցաբերում է գիտական խիստ օբյեկտիվություն և զուսպ մնում վերջնական եզրահանգումներում: Նշելով գեղարվեստական երևույթների միջև եղած ընդհանրություններն ու նմանությունները՝ նա չի անտեսում նաև տարբերությունը, Մարյանը ներկայանում է ստեղծագործական իր անկրկնելի կերպարանով: Հեղինակն իրավացիորեն ընդգծում է այն միտքը, որ Մարյանի նկարչության բուն էությունը հնարավոր չէ բխեցնել կողմնակի ազդեցություններից:

Պահպանելով ընկալման ամբողջականությունը՝ հետազոտողը միևնույն ժամանակ խորանում է քննվող

երևույթի նրբությունների մեջ՝ գաղափարական ակունքներ, պատկերային համակարգ, նկարելաճ, այս կամ այն նկարչական տեխնիկայի արտահայտչական առանձնահատկություններ և այլն: Մենագրությունը շարադրված է ստույգ և կենդանի լեզվով, գրավում է Մարյանի վաղ ստեղծագործության նկատմամբ խորապես ոչ անտարբեր վերաբերմունքով: Այն գիտական մեծ արժեք է ներկայացնում՝ հասցեագրվելով նաև լայն ընթերցողին: Հրատարակությունը շահում է հիմնական տեքստին հաջորդող հայերեն և անգլերեն հակիրճ ամփոփումների, պատկերային նյութի, տպագրության ընդհանուր բարձր որակի շնորհիվ:

Արթուր ԱՎԱԳՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու

Հայտարարություն

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը հայտարարում է մրցույթ մոլեկուլա-բջջային իմունաբանության գիտական խմբի ղեկավարի թափուր տեղի համար:

Ամիսը մեկ փաստաթղթերը հայտարարության օրվանից մեկ ամսվա ընթացքում պետք է ներկայացնել հետևյալ հասցեով՝ Երևան, Հասարակական 7, ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ, հեռ. 28-16-26

Գիտություն

Գլխավոր խմբագիր
Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24թ, հեռ. 56-80-14:
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է փապարտության՝
23. 04. 2012 թ.: Տպագրական՝ 500:
"ԴԻՄԻՏԻՍ" ("Hayka") գազետա ՀԱՅ ԲԱ

գարդ մենագրությունը:

Հետազոտողն անդրադարձել է Մարյանի կենսագրության քիչ ուսումնասիրված, ուստի առավել հետաքրքրական էջերից մեկին՝ նրա նկարչական մեթոդի կազմավորման շրջանին, երբ Մարյանը, ինչպես և իր հասակակից արվեստագետներից ոմանք, տարվել է ժամանակի գրական-գեղարվեստական ամենատարածված հոսանքներից մեկի՝ սիմվոլիզմի, գաղափարներով և մոտիվներով: Թեպետ այդ շրջանը համեմատաբար կարճատև է եղել (1903-1909)՝ այն կարևոր դեր է կատարել Մարյանի գեղարվեստական ինքնորոշման գործում՝ ընդհուպ մոտեցնելով նրան սեփական ոճի, նկարչական ուրույն «ձեռագրի» մշակմանը: Արդեն 1910-ականներին Մարյանը հանդես է եկել իբրև կայացած, հասուն վարպետ:

Ա. Ագասյանը ներկայացրել է Մարյանի ստեղծագործական ձևավորման ամբողջական պատկերը՝ առանձնակի ուշադրության արժանացնելով հայ նկարչի և սիմվոլիզմի գեղարվեստական առնչությունների խնդիրը: Մարյանի վաղ ստեղծագործությունների պատկերաբովանդակային, պատկերագրական և ոճաձևաբանական համակողմանի վերլուծությունը հիմնված է փաստական սովոր նյութի վրա, որը քաղված է թեմային առնչվող